



Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ

Տեղեկանք

Հայաստանի Հանրապետությունում հոգեկան առողջության պահպանման և բարելավման 2014-2019 թթ. ռազմավարության կատարումն ապահովող միջոցառումների իրականացման վերաբերյալ

(2014 թ. ապրիլ – 2015 թ. սեպտեմբեր ժամանակահատված)

2015 թ.

Վանաձոր

Խմբագրեց՝

Արթուր Սաքունց

Կազմեց՝

Մարիետա Թեմուրյան



Բաց Հասարակության
Հիմնադրամներ - Հայաստան

Սույն տեղեկանքում տեղ գտած տեսակետների հեղինակը Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակն է, որն էլ միայն պատասխանատու է նյութի բովանդակության համար: Դրանք արտահայտում են հեղինակների կարծիքը և հաստատված չեն Բաց Հասարակության Հիմնադրամների կողմից, հետևաբար չեն ներկայացնում Բաց Հասարակության Հիմնադրամների դիրքորոշումներն ու տեսակետները: Սույն տեղեկանքի բովանդակությունը կարող է չհամընկնել Բաց Հասարակության Հիմնադրամների տեսակետներին: Տեղեկանքի կազմումը հնարավոր է դարձել Բաց Հասարակության Հիմնադրամների ամբողջական ֆինանսական օժանդակության շնորհիվ՝ «ՀՔԱՎ-ի կայունությունը ՀՀ -ում ժողովրդավարության և մարդու իրավունքների մարտահրավերների լույսի ներքո» ծրագրի շրջանակներում, դրամաշնորհ՝ 18821:

Բովանդակություն

Ներածություն.....	4
Մեթոդաբանությունը.....	6
Ռազմավարության միջոցառումների ֆինանսավորման աղբյուրները.....	7
Միջոցառումների իրականացման գնահատման արդյունքները.....	8
Խումբ 1. Միջոցառումներ, որոնց իրականացումը պետք է սկսվի և ավարտվի 2014 թ.	8
Խումբ 2. Միջոցառումներ, որոնց իրականացումը պետք է սկսվի 2014 թ. և ավարտվի 2015 թ.	12
Խումբ 3. Միջոցառումներ, որոնց իրականացումը պետք է սկսվի և ավարտվի 2015 թ.	25
Խումբ 4. Միջոցառումներ, որոնց իրականացումը պետք է սկսվի 2014 կամ 2015 թվականներին և ավարտվի 2016, 2018 կամ 2019 թվականներին.....	29
Ամփոփում.....	44
Հավելվածներ.....	46
Հավելված Ա. ՀՀ առողջապահության նախարարի 24.11.2014 թ. «Պետության կողմից երաշխավորված անվճար հիվանդանոցային բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հոգեբուժական բժշկական կազմակերպություններում մշտադիտարկում կազմակերպելու մասին» թիվ 2746-Ս հրաման.....	46
Հավելված Բ. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 16.12.2014 թ. «Պետության կողմից երաշխավորված անվճար հիվանդանոցային բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հոգեբուժական բժշկական կազմակերպություններում ուսումնասիրություններ կազմակերպելու մասին» թիվ 2973-Ս հրաման.....	50
Հավելված Գ. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2014 թվականի ապրիլի 16-ի թիվ 811-Ս հրաման.....	51
Հավելված Դ. ՀՀ առողջապահության նախարարի 01.04.2014թ. «Մանկական հոգեբուժական ծառայության բարելավման ծրագրի մշակման աշխատանքային խումբ ստեղծելու մասին» N657-Ս հրաման.....	52

Ներածություն

2014 թ. ապրիլի 17-ին ՀՀ կառավարության կողմից հաստատվել է Հայաստանի Հանրապետությունում հոգեկան առողջության պահպանման և բարելավման 2014-2019 թթ. ռազմավարությունը և ռազմավարության կատարումն ապահովող միջոցառումների ցանկը¹ (այսուհետ՝ Ռազմավարություն, Միջոցառումների ցանկ):

Ռազմավարության նպատակն է «հոգեկան առողջության պահպանման և բարելավման համակարգի զարգացումը և բնակչության հոգեկան առողջության խնդիրների առաջացման կանխարգելումը»:

Հայաստանի Հանրապետությունում հոգեկան առողջության պահպանման և բարելավման 2014-2019 թթ. ռազմավարության կատարումն ապահովող միջոցառումների ցանկում ընդգրկված են ընդհանուր թվով 32 միջոցառումներ, որոնք ուղղված են հետևյալ 7 նպատակների իրականացմանը՝

Նպատակ 1. օրենսդրության համապատասխանեցում ՀՀ-ի կողմից ստանձնած միջազգային պարտավորություններին,

Նպատակ 2. հոգեկան առողջության ոլորտի մասնագիտությունների անվանացանկի, զբաղմունքների նկարագրության և որակավորման հստակեցում,

Նպատակ 3. մասնագիտական կրթական ծրագրերի արդիականացում,

Նպատակ 4. հոգեկան առողջության ոլորտի մասնագետների շարունակական կրթության զարգացում,

Նպատակ 5. հոգեկան առողջության խնդիրների և ծառայությունների վերաբերյալ իրազեկվածության աստիճանի բարձրացում,

Նպատակ 6. հոգեբուժական ծառայությունների որակի և մատչելիության բարելավում,

Նպատակ 7. հոգեկան առողջության ոլորտի խնդիրների լուծման ինստիտուցիոնալ ձևից անցում համայնքահեն աջակցության համակարգի:

Նշված նպատակներին ուղղված 32 միջոցառումների իրականացման պատասխանատուներ են հանդիսանում ՀՀ առողջապահության, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի, ՀՀ արտաքին գործերի, ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների, ՀՀ էկոնոմիկայի, ՀՀ կրթության և գիտության նախարարությունները, ՀՀ մարզպետարանները և Երևանի քաղաքապետարանը (համաձայնությամբ) (տե՛ս աղյուսակ 1): Մինևույն ժամանակ ՀՀ կրթության և գիտության, Աշխատանքի և սոցիալական հարցերի, Առողջապահության նախարարությունները, ՀՀ մարզպետարանները, Երևանի քաղաքապետարանը (համաձայնությամբ), Տեղական ինքնակառավարման մարմինները (համաձայնությամբ), հասարակական կազմակերպությունները (համաձայնությամբ), դոնոր

¹ <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=90364>

կազմակերպությունները (համաձայնությամբ), ԲՈւՀ-երը (համաձայնությամբ) հանդիսանում են տարբեր միջոցառումների համակատարողներ:

Աղյուսակ 1

Ռազմավարության միջոցառումների թիվն ըստ պատասխանատուների

N	Պատասխանատու մարմինը/մարմինները	Միջոցառումների թիվը
1	ՀՀ առողջապահության նախարարություն	13
2	ՀՀ առողջապահության նախարարություն, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	7
3	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	4
4	ՀՀ կրթության և գիտության նախարարություն	2
5	ՀՀ արտաքին գործերի նախարարություն	1
6	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	1
7	ՀՀ առողջապահության նախարարություն, ՀՀ մարզպետարաններ	2
8	ՀՀ առողջապահության նախարարություն, ՀՀ մարզպետարաններ, Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ)	1
9	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, ՀՀ տարածքային կատավարման և արտակարգ իրավիճակների նախարարություն	1
Ընդամենը		32

Ինչպես տեսնում ենք աղյուսակ 1-ից, միջոցառումների կատարման համար հիմնական պատասխանատուները ՀՀ առողջապահության և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություններն են: Այսպես, միջոցառումներից մոտ 40 տոկոսի կատարման համար միակ պատասխանատուն ՀՀ առողջապահության նախարարությունն է, մոտ 12 տոկոսի կատարման համար՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը և ևս 21 տոկոսի կատարման համար՝ նշված երկու նախարարությունները միասին: ՀՀ առողջապահության և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունները պետական այլ մարմինների հետ համատեղ պատասխանատու են նաև միջոցառումներից ևս 12 տոկոսի համար:

Ռազմավարության կատարումն ապահովող Միջոցառումների ցանկում սահմանված են նաև միջոցառումների իրականացման ժամկետները, ակնկալվող արդյունքը և ֆինանսավորման աղբյուրները: Ի դեպ, նշված չեն ֆինանսավորման ծավալները:

Ռազմավարության կատարումն ապահովող միջոցառումների թիվը, ըստ իրականացման տարեթվերի, ներկայացվում է աղյուսակ 2-ում:

Միջոցառումների իրականացման ժամանակացույցը

N	Միջոցառման իրականացման տարեթիվը	Միջոցառումների թիվը
1	2014	2
3	2014-2015	5
4	2014-2016	3
5	2014-2019	3
6	2015	4
7	2015-2016	7
8	2015-2019	1
9	2016	6
10	2018-2019	1
Ընդամենը		32

Ինչպես տեսնում ենք աղյուսակ 2-ից, 2014 թվականին ամբողջությամբ պետք է իրականացվեն 32 միջոցառումները միայն երկուսը: Միննույն ժամանակ ևս 11 միջոցառման իրականացման աշխատանքները պետք է սկսվեն 2014 թվականից, ևս 12-ինը՝ 2015 թվականից: Նկատենք, որ նշված միջոցառումներից 9-ի կատարման ավարտը նախատեսված է 2015 թվականը: Միջոցառումներից 6-ի իրականացումը նախատեսված է սկսել 2016 թվականից, ևս մեկը՝ 2018 թվականից:

Մեթոդաբանությունը

Ռազմավարության գնահատման համար ուսումնասիրվել են միջոցառումների իրականացման ժամկետները և ծավալը, ինչպես նաև բովանդակությունը:

Ըստ ժամկետների միջոցառումների գնահատման նպատակով վերջիններս առանձնացվել են հետևյալ խմբերի՝

Խումբ 1. միջոցառումներ, որոնց իրականացումը պետք է սկսվի և ավարտվի 2014 թ. (2 միջոցառում),

Խումբ 2. միջոցառումներ, որոնց իրականացումը պետք է սկսվի 2014 թ. և ավարտվի 2015 թ. (5 միջոցառում),

Խումբ 3. միջոցառումներ, որոնց իրականացումը պետք է սկսվի և ավարտվի 2015 թ. (4 միջոցառում),

Խումբ 4. միջոցառումներ, որոնց իրականացումը պետք է սկսվի 2014 կամ 2015 թվականներին և ավարտվի 2016, 2018 կամ 2019 թվականներին (14 միջոցառում) և

Խումբ 5. միջոցառումներ, որոնց իրականացումը պետք է սկսվի և ավարտվի 2016 թ. կամ սկսվի 2018 թ. և ավարտվի 2019 թ. (7 միջոցառում):

Ռազմավարության իրականացման ներկա փուլում գնահատվել են առաջին, երկրորդ և երրորդ խմբերի միջոցառումների կատարումը:

Գնահատվել է չորրորդ և հինգերորդ խմբերի միջոցառումների իրականացման ընթացքը:

Հինգերորդ խմբի միջոցառումների իրականացմանը կանդրադառնանք Ռազմավարության իրականացման վերաբերյալ հաջորդ տեղեկանքում:

Առաջին, երկրորդ և երրորդ խմբերի միջոցառումների իրականացումը գնահատվել է հետևյալ սանդղակով՝

- իրականացվել է,
- իրականացվել է մասամբ,
- չի իրականացվել:

Երկրորդ և երրորդ խմբերի միջոցառումների իրականացումը գնահատելիս հաշվի է առնվել, թե որքանով է իրատեսական դրանք ավարտել մինչև 2015 թվականի վերջ:

Չորրորդ խմբի միջոցառումների իրականացումը գնահատվել է հետևյալ սանդղակով՝

- սկսվել է ժամանակին,
- սկսվել է ուշացումով,
- չի սկսվել:

Ռազմավարության իրականացումը գնահատվել է նաև միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների ապահովման տեսակետից:

Միջոցառումների իրականացման վերաբերյալ տեղեկատվությունը ձեռք է բերվել պատասխանատու, ինչպես նաև համակատարող մարմիններին ուղարկված տեղեկատվության հարցումների միջոցով²:

Ռազմավարության միջոցառումների ֆինանսավորման աղբյուրները

Ռազմավարության միջոցառումների ցանկում նշված են, ըստ 32 միջոցառումների, ֆինանսավորման աղբյուրները՝

- «ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորում չի պահանջվում»՝ 25 միջոցառում,
- «ՀՀ օրենքով չարգելված այլ աղբյուրներ»՝ 4 միջոցառում,

² Տեղեկատվության հարցումներ Ռազմավարության գնահատման ներկա փուլում չի ուղարկվել այն պատասխանատու կամ համակատարող մարմիններին, որոնք իրենց համաձայնությամբ են մասնակցում միջոցառումների կատարմանը:

- «ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորում չի պահանջվում, ՀՀ օրենքով չարգելված այլ աղբյուրներ»՝ 3 միջոցառում:

Ինչպես արդեն կազմակերպությունն անդրադարձել է «Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց խնամքի և սոցիալական սպասարկման այլընտրանքային ծառայությունների տրամադրման հայեցակարգի իրականացման միջոցառումների 2013-2017 թթ. ծրագրի կատարման վերաբերյալ» տեղեկանքում³, միայն ֆինանսական միջոցների սպասարկումը կարող է երաշխավորել միջոցառումների արդյունավետ իրականացումը: Օրենքով չարգելված այլ աղբյուրներ նշելով՝ վտանգվում է միջոցառումների կատարումը, քանի որ «օրենքով չարգելված այլ աղբյուրները» անմիջական պատասխանատվություն չեն կրում միջոցառումների կատարման համար և միայն իրենց համաձայնությամբ կարող են ֆինանսական աջակցություն ցուցաբերել:

Կազմակերպության կողմից պետական մարմիններին հասցեագրված տեղեկատվության հարցումներով պահանջվել էր տրամադրել տեղեկատվություն, թե միջոցառումների կատարման համար որքան ֆինանսական միջոցներ են ծախսվել և որ աղբյուրներից: Մինչդեռ պետական 14 մարմիններից միայն Լոռու մարզպետարանն է պատասխանել տվյալ հարցադրմանը: Վերջինս հայտնել է, որ ֆինանսական միջոցներ չեն ծախսվել:

Գնահատված միջոցառումներից 5-ի իրականացման ֆինանսավորման աղբյուր է նշվում «ՀՀ օրենքով չարգելված այլ աղբյուրներ» կամ «ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորում չի պահանջվում, ՀՀ օրենքով չարգելված այլ աղբյուրներ»: Տվյալ միջոցառումներից երկուսը (դասընթացների իրականացում, շուրջօրյա խնամքի տների ձևավորում) կարող են իրականացվել միայն ֆինանսական ներդրումների միջոցով, սակայն պարզ չի ֆինանսավորման աղբյուրները և դրանց ծավալը:

Միջոցառումների իրականացման գնահատման արդյունքները

Խումբ 1. Միջոցառումներ, որոնց իրականացումը պետք է սկսվի և ավարտվի 2014 թ.

2014 թ. նախատեսված է իրականացնել երկու միջոցառում, որոնց կատարման համար պատասխանատու են ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը և ՀՀ առողջապահության նախարարությունը:

³ <http://hcav.am/wp-content/uploads/2015/05/%D5%8F%D5%A5%D5%B2%D5%A5%D5%AF%D5%A1%D5%B6%D6%84.pdf>

Նպատակ 2, միջոցառում 1 - Զբաղմունքների դասակարգչի վերանայում՝ հոգեկան առողջության ոլորտի տարբեր օղակների մասնագետների մասով

Պատասխանատու՝ ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն

Համակատարող՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, ՀՀ առողջապահության նախարարություն, ՀՀ կրթության և գիտության նախարարություն

Նախատեսված արդյունքը՝ ըստ Միջոցառումների ցանկի - Հստակեցված զբաղմունքների անվանացանկ և ըստ այդմ, որոշակիացված պատասխանատվությունների շրջանակ

Միջոցառման իրականացման մասին տրամադրված տեղեկատվություն

ՀՀ Էկոնոմիկայի նախարարության կողմից

ՀՀ Էկոնոմիկայի նախարարի 2014 թ. դեկտեմբերի 11-ի N 1111-Ն հրամանով համապատասխան լրացում է կատարվել ՀՀ Էկոնոմիկայի նախարարի 2013 թ. սեպտեմբերի 19-ի «Հայաստանի Հանրապետության տեխնիկատնտեսական և սոցիալական տեղեկատվության «Զբաղմունքների դասակարգիչ» հաստատելու և Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարի 2009 թվականի հուլիսի 31-ի N 632-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 873-Ն հրամանում:

Այսպես, N 1111-Ն հրամանով ՀՀ Էկոնոմիկայի նախարարի 2013 թվականի սեպտեմբերի 19-ի «Հայաստանի Հանրապետության տեխնիկատնտեսական և սոցիալական տեղեկատվության «Զբաղմունքների դասակարգիչ» հաստատելու և Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարի 2009 թվականի հուլիսի 31-ի N 632-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 873-Ն հրամանով հաստատված հավելվածի «Պարզաբանումներ՝ զբաղմունքների հիմնական խմբերի, ենթախմբերի, փոքր և ստորին խմբերի» 3-րդ մասի «Հիմնական խումբ 2. Մասնագետներ բարձր որակավորման» 2-րդ բաժնի «33. Ստորին խումբ 2221. Բժիշկներ» 33-րդ գլխի 1-ին կետում «զարգացնում են հիվանդությունների» բառերից հետո լրացվել է՝ «այդ թվում՝ հոգեկան առողջության խանգարումների,» բառերը:

Ելնելով վերոգրյալից՝ միջոցառման կատարումը գնահատվում է՝ իրականացվել է:

Նպատակ 6, միջոցառում 12 - Պետություն-հանրային հատված համագործակցության շրջանակներում մշտադիտարկման խմբի ձևավորում՝ հոգեկան առողջության ծառայությունների որակի, արդյունավետության ապահովման ոլորտում պարբերական ուսումնասիրությունների իրականացնելու նպատակով

Պատասխանատու՝ ՀՀ առողջապահության նախարարություն

Համակատարող՝ Համապատասխան հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ)

Նախատեսված արդյունքը՝ ըստ Միջոցառումների ցանկի - Հոգեկան առողջության ոլորտում ծառայություններ մատուցող կազմակերպություններում մշտադիտարկումների իրականացում, թերությունների, խնդիրների վերհանում և դրանց լուծմանն ուղղված առաջարկությունների ներկայացում

Միջոցառման իրականացման մասին տրամադրված տեղեկատվություն

1. ՀՀ առողջապահության նախարարության կողմից (2015 թ. մարտի 30-ին տրամադրած տեղեկատվություն)

ՀՀ առողջապահության նախարարի 24.11.2014 թ. «Պետության կողմից երաշխավորված անվճար հիվանդանոցային բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հոգեբուժական բժշկական կազմակերպություններում մշտադիտարկում կազմակերպելու մասին» թիվ 2746-Ս հրամանի համաձայն՝ հոգեկան առողջության ծառայությունների որակի արդյունավետության ապահովման ոլորտում պետություն հանրային հատված համագործակցության շրջանակներում կիրականացվի մշտադիտարկում՝ «Ավան» հոգեկան առողջության կենտրոն», «Նորք» հոգեբուժական կենտրոն», «Նուբարաշեն» հոգեբուժական կենտրոն», «Ներոզների կլինիկա», «Արմաշի առողջության կենտրոն», «Սևանի հոգեբուժական հիվանդանոց», «Վանաձորի նյարդահոգեբուժական դիսպանսեր», «Կապանի նյարդահոգեբուժական դիսպանսեր, «Գյումրու հոգեկան առողջության կենտրոն» փակ բաժնետիրական ընկերություններում: Հրամանը բաղկացած է 3 հավելվածներից, որոնք հաստատում են հոգեբուժական կազմակերպությունների ցանկը, հոգեբուժական կազմակերպություններում մշտադիտարկումներ իրականացնողների ցանկը և հոգեբուժական կազմակերպություններում մշտադիտարկման իրականացման ընթացքում հաշվետվության ձևը (տե՛ս հավելված Ա.):

2. ՀՀ Լոռու մարզպետարանի կողմից

2014 թ. ՀՀ առողջապահության նախարար Ա.Մուրադյանի հրամանով իրականացվել է մշտադիտարկում հոգեբուժական կազմակերպություններում, նույնը շարունակվել է 2015 թ.: Մշտադիտարկումը իրականացվում է եռամսյակը մեկ անգամ՝ 20-օրյա ժամկետում: ՀՀ առողջապահության նախարար Ա.Մուրադյանը բազմիցս հրավիրել է խորհրդակցություններ և քննարկումներ հոգեբուժական ծառայության պատասխանատուների հետ, և շնորհիվ այս միջոցառումների՝ զգալիորեն բարձրացվել է մատուցվող ծառայությունների որակը:

ՀՀ առողջապահության նախարարության կողմից տրամադրված տեղեկատվության համաձայն՝ ՀՀ առողջապահության նախարարի 2746-Ս հրամանի հավելվածով հաստատված մշտադիտարկումներ իրականացնողների ցանկում ներգրավված են 8 անդամ: Այս անձանցից՝

- *հինգն ընդգրկված են ՀՀ առողջապահության նախարարությունից,*
- *մեկը՝ Հայկական հոգեբուժական ասոցիացիայից (համաձայնությամբ), ով ներկայումս ներկայացնում է նաև ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը,*

- մեկը՝ «Ամբրա» հոգեկան բարեկեցության կենտրոն»-ից (համաձայնությամբ), ով միննույն ժամանակ ներկայացնում է Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանը և
- մեկը՝ «Սոցիալական հոգեբուժություն» հայկական ասոցիացիայի վարչության անդամ է (համաձայնությամբ), ով միննույն ժամանակ ներկայացնում է Երևանի Միխթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի հոգեբուժության ամբիոնը:

Փաստորեն հանրային հատվածից ներկայացված են ընդամենը 3 հոգի, ովքեր խմբի աշխատանքներում հանդես են գալիս համաձայնությամբ: Այսինքն՝ հանրային հատվածից ներկայացուցիչներ մշտադիտարկումներին կարող են չընդգրկվել: Ավելին, խմբի՝ հանրային հատվածը ներկայացնող անդամներն իրականում միաժամանակ պետական հատվածի ներկայացուցիչներ են:

Խմբում միայն վերը նշված անդամների ներգրավվածությունը չի ապահովվում հավասար ներկայացվածության միջոցով պետություն-հանրային հատված համագործակցությունը: Ստացվում է, որ խումբն իրականացնում է աշխատանք, որը ի սկզբանե իր պարտավորությունների մեջ է մտնում: Ընդ որում կասկածի տակ է դրվում անկախ տեսակետների ներկայացման հնարավորությունը և ցանկությունը:

Միննույն ժամանակ հրամանով հաստատված է հաշվետվության ձևը, որով պետք է առաջնորդվի մշտադիտարկման խումբը: Սակայն հաշվետվության ձևը ևս մտահոգություններ է առաջացնում:

Օրինակ՝ հաշվետվության ձևի մեջ 8-րդ կետի համաձայն՝ մշտադիտարկողը պետք է նշում կատարի, թե արդյոք ֆիզիկական զսպման միջոց կիրառվում է, թե ոչ: Մինչդեռ միայն այս տեղեկատվությունը ֆիզիկական զսպման միջոցի կիրառման վերաբերյալ բավարար չէ բացահայտելու որևէ խնդիր, եթե այդպիսին կա:

Ավելին, անգամ հարց է ծագում, թե տվյալ խմբի կողմից պատշաճ իրականացվել են արդյոք մշտադիտարկումներ: Չնայած Լոռու մարզպետարանը տեղեկացրել է, որ նախարարի հրամանի համաձայն՝ իրականացվում են մշտադիտարկումները, սակայն Առողջապահության նախարարությունը 2015 թվականի հոկտեմբերի 22-ի գրությամբ կազմակերպության հարցին՝ իրականացվել են արդյոք մշտադիտարկումներ և ինչ արդյունքներ են գրանցվել, չի պատասխանել:

Միջոցառման կատարումը գնահատվում է՝ չի իրականացվել:

Այսպիսով, 2014 թվականին իրականացվել է նախատեսված երկու միջոցառումներից մեկը, մյուսը չի իրականացվել: Իրականացված միջոցառման պատասխանատու մարմինը ՀՀ էկոնոմիկայի նախարարությունն է, չիրականացված միջոցառման պատասխանատուն՝ ՀՀ առողջապահության նախարարությունը:

Խումբ 2. Միջոցառումներ, որոնց իրականացումը պետք է սկսվի 2014 թ. և ավարտվի 2015 թ.

2014-2015 թթ. նախատեսված է իրականացնել 5 միջոցառում, որոնց կատարման պատասխանատու են ՀՀ առողջապահության նախարարությունը (2 միջոցառում), ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը (2 միջոցառում) և ՀՀ առողջապահության նախարարությունը և ՀՀ մարզպետարանները համատեղ (1 միջոցառում):

Նպատակ 6, միջոցառում 2 – Բուժանձնակազմի աշխատանքային և վարձատրության պայմանների բարելավմանն ուղղված առաջարկությունների ներկայացում ՀՀ կառավարություն

Պատասխանատու՝ ՀՀ առողջապահության նախարարություն

Նախատեսված արդյունքը՝ ըստ Միջոցառումների ցանկի – Կապահովվի հոգեբույժ մասնագետների թվաքանակի ավելացումը և շարունակական կրթության որակի հետագա բարելավումը

Միջոցառման իրականացման մասին տրամադրված տեղեկատվություն

ՀՀ առողջապահության նախարարության կողմից

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2014 թվականի ապրիլի 16-ի N811-Ա հրամանով հաստատվել են պետության կողմից երաշխավորված անվճար հոգեբուժական և նարկոլոգիական բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպությունների պայմանագրային գումարների հաշվարկման և ֆինանսավորման նորմատիվները, 2015 թվականի մարտի 12-ի N548-Ա հրամանով հաստատվել են պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հիսուն և ավելի տոկոս պետական (համայնքային) բաժնեմաս ունեցող առևտրային կազմակերպությունների և պետական (համայնքային) ոչ առևտրային կազմակերպությունների տնօրենների, տնօրենի տեղակալների և գլխավոր հաշվապահների աշխատանքի վարձատրման չափաբաժինները:

ՀՀ առողջապահության նախարարության կողմից տրամադրված տեղեկատվությունից պարզ չէ, թե ներկայացվել են արդյոք բուժանձնակազմի աշխատանքային և վարձատրության պայմանների բարելավմանն ուղղված առաջարկություններ ՀՀ կառավարություն: Միաժամանակ պարզ չէ, թե նախարարի վերը նշված հրամանները որքանով են նպաստում հոգեբույժ մասնագետների թվաքանակի ավելացմանը և շարունակական կրթության որակի հետագա բարելավմանը:

Միջոցառման իրականացումը գնահատվում է՝ չի իրականացվել:

Նպատակ 6, միջոցառում 6 - ՀՀ մարզերում ստացիոնար և ամբուլատոր ծառայություն իրականացնող հոգեկան առողջության կենտրոններ ստեղծելու կարողությունների գնահատում (ա. Այն մարզերում, որտեղ գործում են հոգեբուժական ստացիոնարներ, տվյալ մարզի տարածաշրջանների պոլիկլինիկաների հոգեբույժների կաբինետները, չփոխելով տեղակայումը, ներառել ստացիոնար ծառայություն իրականացնող կազմակերպության մեջ, բ. Այն մարզերում, որտեղ չկան հոգեբուժական ստացիոնարներ, ձևավորել առանձին ստացիոնարներ կամ բաժանմունքներ մարզային հիվանդանոցների կազմում՝ նրանց միացնելով տվյալ մարզի տարածաշրջանների պոլիկլինիկաների հոգեբույժների կաբինետները՝ չփոխելով տեղակայումը)

Պատասխանատու՝ ՀՀ առողջապահության նախարարություն, ՀՀ մարզպետարաններ
Համակատարող՝ Համապատասխան հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ)

Նախատեսված արդյունքը՝ ըստ Միջոցառումների ցանկի – Մարզերում հոգեկան առողջության ապահովմանն ուղղված ծառայությունների տարանջատման, որակի և մատչելիությանը ուղղված առաջարկությունների առկայություն

Միջոցառման իրականացման մասին տրամադրված տեղեկատվություն

1. ՀՀ առողջապայության նախարարության կողմից (2015 թ. մարտի 30-ին տրամադրած տեղեկատվություն)

Շուրջօրյա խնամքի կարիք չունեցող հիվանդների համար ծառայությունների զարգացման, Հայաստանի Հանրապետության մարզերում ստացիոնար և ամբուլատոր ծառայություն իրականացնող հոգեկան առողջության կենտրոնների ստեղծման, ծերունական հոգեբուժական հաստատությունների, ստորաբաժանումների ստեղծման հնարավորությունների կարողությունների գնահատման նպատակով, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 16.12.2014 թ. «Պետության կողմից երաշխավորված անվճար հիվանդանոցային բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հոգեբուժական բժշկական կազմակերպություններում ուսումնասիրություններ կազմակերպելու մասին» թիվ 2973-Ս հրամանի համաձայն կիրականացվեն ուսումնասիրություններ (տե՛ս Հավելված Բ.):

(2015 թ. հոկտեմբերի 22-ին տրամադրած տեղեկատվություն)

6.4-6, 12-րդ կետերը ամփոփված են «Աջակցություն Հայաստանում հոգեբուժական ծառայության բարեփոխումներին» նոր վարկային ծրագրում՝ ինչի նախագիծը ներկայացվել է ՀՀ կառավարություն: Ներկայում, Հայաստանում հոգեբուժական ծառայությունը ֆինանսավորվում է միայն պետական բյուջեի միջոցներից: Առողջապահությանը հատկացված միջոցների շուրջ 2.7%-ը ուղղվում է հոգեբուժական ծառայությունների տրամադրմանը, որի 88%-ը հասցեագրված է ստացիոնար ծառայությանը:

ՀՀ բնակչությանը հոգեբուժական ծառայությունը տրամադրվում է Երևանում՝ հոգեբուժական 5 հիվանդանոցում, մարզային մասնագիտացված կենտրոններում (Սևանի

հոգեբուժական հիվանդանոց, Գյումրու հոգեկան առողջության կենտրոն, Լոռու մարզային հոգենյարդաբանական դիսպանսեր, Սյունիքի մարզային նյարդահոգեբուժական դիսպանսեր, Ակադեմիկոս Արսեն Հայրիյանի անվան առողջության կենտրոն) և Վարդենիսի նյարդահոգեբանական տուն-ինտերնատում: Մայրաքաղաքի որոշ բժշկական կենտրոններում գործում են նաև հոգեբուժական բաժանմունքներ, իսկ մարզային 21 պոլիկլինիկաներում կան հոգեբուժության կաբինետներ: Տեղին է ընդգծել, որ ՀՀ 10 մարզից 4-ում մասնագիտացված ստացիոնար հոգեբուժական ծառայությունը բացակայում է: Հոգեբուժական ծառայություններ մատուցող գրեթե բոլոր հաստատությունների ենթակառուցվածքները մաշված են, կահույքը դեռևս խորհրդային տարիների արտադրության է, իսկ անհրաժեշտ բժշկական սարքավորումները բացակայում են կամ գտնվում են անսարք վիճակում:

ՀՀ հոգեբուժական ծառայության գործունեությունը կազմակերպված է համաձայն միջազգային և ազգային օրենսդրության պահանջներին: ՀՀ անկախության ձեռք բերումից 13 տարի անց մշակվել և ընդունվել է օրենք «Հոգեբուժական ծառայության» վերաբերյալ, իսկ ավելի ուշ՝ 2014 թվականի ապրիլի 17-ի թիվ 15 որոշմամբ ՀՀ կառավարությունը հաստատել է ՀՀ հոգեկան առողջության պահպանման և բարելավման 2014-2019 թթ. ռազմավարությունը: Ռազմավարությամբ նախատեսվող միջոցառումների գործնական իրականացումն ապահովելու նպատակով՝ մշակվել է ծրագիրը, որը նախատեսվում է ներկայացնել Համաշխարհային բանկին 2015 թ. աշնանը:

Ծրագրի նպատակները

Ծրագրի նպատակն է՝ աջակցել հոգեկան հիվանդությունների կանխարգելմանը, հիվանդացության և մահացության ցուցանիշների նվազեցմանը, ինչպես նաև հոգեբուժական ծառայությունների արմատական բարեփոխումներին՝ ուղղված գործող հոգեբուժական ծառայության մոդելի վերակազմակերպմանը, մոտեցնելով այն արդի, միջազգայնորեն ընդունված մոդելներին:

Հայաստանում նախատեսվում է ստեղծել հոգեբուժական ծառայության «հավասարակշռված» («Balanced model») մոդել, որի հիմքում կլինի համայնքային հոգեբուժական ծառայությունը:

Սույն ծրագիրը նախատեսվում է իրականացնել 5 տարիների ընթացքում՝ 2016-2020 թթ.:

Նպատակները.

- Աջակցել հոգեբուժական ծառայությունների ինտեգրմանն ԱԱՊ օղակին
- Աջակցել հոգեբուժական ծառայության կառուցվածքի օպտիմալացմանը և արդիականացմանը
- Աջակցել հոգեբուժական ծառայություններ տրամադրող անձնակազմի շարունակական կրթմանը և համայնքային մակարդակի հոգեբուժական ծառայությունների հզորացմանը

- Աջակցել ՀՀ 4 քաղաքային համայնքներում խնամքի տների ստեղծմանը՝ ակտիվ բուժում չպահանջող հիվանդների սոցիալական ինտեգրվածությունը բարձրացնելու նպատակով

Հիմնական միջոցառումներն ըստ ենթաբաղադրիչների

Ա. Աջակցություն հոգեբուժական ծառայությունների ինստիտուցիոնալ զարգացմանը և որակի բարելավմանը.

1. Գործող օրենսդրության գնահատում և առաջարկությունների մշակում՝ ուղղված հոգեբուժական ծառայության հետագա բարելավմանը և ԱԱՊ օղակին ինտեգրման ապահովմանը

2. Կլինիկական ուղեցույցների և հիվանդի վարման համառոտ գործելակարգերի մշակման աշխատանքներ, ինչպես նաև որակի կառավարման համակարգի ներդրում: Կլինիկական ուղեցույցների և հիվանդի վարման համառոտ գործելակարգերի մշակումը նախատեսվում է հետևյալ 9 հիվանդությունների և վիճակների համար՝ դեպրեսիա, պսիխոզ, երկբևեռ խանգարում, էպիլեպսիա, զարգացման խանգարումներ, դեմենցիա, ակոհոլային խանգարումներ, թմրամիջոցների օգտագործման արդյունքում առաջացած խանգարումներ և ինքնասպանությունների կանխարգելում:

3. Աջակցություն Երևանի պետական բժշկական համալսարանում նոր կրթական ծրագրերի մշակմանը և ներդրմանը:

Բ. Աջակցություն հոգեբուժական ծառայությունների ինտեգրմանը ԱԱՊ օղակին.

1. Ընտանեկան բժիշկների կրթում՝ վերոնշյալ հիմնական հոգեկան հիվանդությունների վաղ հայտնաբերման և արդյունավետ վարման նպատակով,

2. Հոգեբույժների կրթում՝ հոգեկան հիվանդությունների կանխարգելման, բուժման և հիվանդների խնամքի ժամանակակից մոտեցումների և ընտանեկան բժիշկների հետ համագործակցության վերաբերյալ:

3. 10 բժշկի պատրաստում հոգեբուժություն մասնագիտությամբ:

Գ. Հոգեբուժական հիվանդանոցային ծառայությունների ինտեգրում բազմապրոֆիլային բժշկական կենտրոններին, որի արդյունքում հոգեբուժական ծառայություններ մատուցող 2 մասնագիտացված հաստատությունների ծառայությունները կմիավորվեն բազմապրոֆիլային կենտրոններին.

1. ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունու բժշկական կենտրոնում հոգեբուժական բաժանմունքի ստեղծում

2. ՀՀ Վայոց ձորի մարզի Վայքի բժշկական կենտրոնում հոգեբուժական բաժանմունքի ստեղծում

3. Սուրբ Գրիգոր Լուսավորիչ բժշկական կենտրոնում հոգեբուժական հիվանդների անհետաձգելի օգնության և վերակենդանացման ծառայության ստեղծում՝ սուր վիճակների կառավարման և բուժման համար, այն հիվանդների մոտ, որոնք ունեն հոգեկան խնդիրներ

4. «Նուբարաշեն» հոգեբուժական կենտրոնի արդիականացում, ներառյալ սոցիալ աշխատանքային ռեաբիլիտացիայի հնարավորությունների ստեղծում, մասնավորապես՝ մինչև 90-ական թվականները գործող կարի արտադրամասի և ջերմոցի վերանորոգում/վերագործարկում,

5. «Նորք» հոգեբուժական կենտրոնի արդիականացում՝ մանկական հոգեբուժական բաժանմունքի ստեղծում, ներառյալ սոցիալ աշխատանքային ռեաբիլիտացիայի հնարավորությունների ստեղծում, մասնավորապես՝ աստղծագործական արտադրամասի հիմնում:

Դ. Աջակցություն համայնքի բարելավմանը՝ հոգեկան խնդիրներ ունեցող հիվանդների խնամքին.

Հիվանդների խնամքի բարելավման, արագ ապաքինման և ինտեգրման նպատակով՝ նախատեսվում է ստեղծել համայնքային խնամքի տներ Հայաստանի հետևյալ քաղաքային չորս համայնքում՝ ՀՀ Շիրակի մարզի Գյումրու, ՀՀ Արմավիրի մարզի Արմավիրի, ՀՀ Տավուշի մարզի Իջևանի և ՀՀ Սյունիքի մարզի Կապանի: Սույն ծրագրի շրջանակներում, բազմաթիվ հիվանդներ, որոնք ինքնուրույն են, ում վիճակը կայուն է և ակտիվ բուժում չեն պահանջում, հոգեբուժական փորձաքննությունից հետո (ըստ Կարիքների գնահատման Քեմբրեյլյան կարճ հարցաշարի (CANSAS)), կտեղափոխվեն խնամքի տներ՝ յուրաքանչյուրը նախատեսված 16 հիվանդի համար: Համայնքները կհատկացնեն տարածք խնամքի տների համար՝ դրանով իսկ մասնակցելով ծրագրի իրականացմանը: Կստորագրվի եռակողմ պայմանագիր՝ ՀՀ ԱՆ, մարզային և քաղաքային իշխանությունների միջև, ըստ որի վարկային ծրագրի միջոցներով կֆինանսավորվեն խնամքի տների հիմնադրումը և շահագործումը 3 տարվա ընթացքում, իսկ հետագա ֆինանսավորումը կապահովվի համայնքը:

Անհրաժեշտ ֆինանսական ներդրումների նախնական գնահատում

Ենթաբաղադրիչ	Գումար, ԱՄՆ դոլար	Նշումներ
Ենթաբաղադրիչ Ա. Աջակցություն հոգեբուժական ծառայությունների ինստիտուցիոնալ զարգացմանը և որակի բարելավմանը	235.500	
Ենթաբաղադրիչ Բ. Աջակցություն հոգեբուժական ծառայությունների ինտեգրմանը ԱԱՊՕ	1.404.000	
Ենթաբաղադրիչ Գ. Հոգեբուժական հիվանդանոցային ծառայությունների ինտեգրում բազմապրոֆիլային բժշկական կենտրոններ, ծառայության արդիականացում և օպտիմալացում	21.586.535	
Ենթաբաղադրիչ Դ. Խնամքի տների հիմնում	1.386.595	
Ծրագրի կառավարում	1.380.000	
ԸՆԴԱՄԵՆԸ	25.992.630	

2. ՀՀ Լոռու մարզպետարանի կողմից

Լոռու մարզում հոգեբուժական հիվանդանոցային և ամբուլատոր ծառայություններն իրականացնում է «Լոռու մարզային հոգեկայանության կենտրոն» ՓԲԸ-ն, իսկ տարածաշրջանների բժշկական կենտրոնների հոգեբուժական կաբինետները դեռևս ներառված չեն դիսպանսերի կազմի մեջ:

ա/ Լոռու մարզում հոգեկան առողջության կենտրոններ ստեղծելու հարցը չի քննարկվել, քանի որ ներկայումս չկա դրա անհրաժեշտությունը:

3. ՀՀ Կոտայքի մարզպետարանի կողմից

Հոգեկան առողջության ստացիոնար ծառայություն իրականացնող կենտրոնի ստեղծումը մարզում նպատակահարմար չէ, ինչը պայմանավորված է Երևան քաղաքին մարզի մերձակա դիրքով:

4. ՀՀ Շիրակի մարզպետարանի կողմից

Հոգեկան առողջության խնդիրներ ունեցողներին հասարակությանը ինտեգրելու նպատակով հիվանդանոցային բուժում չպահանջող հոգեկան հիվանդների համար ՀՀ Շիրակի մարզի «Արթիկ բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերություններում գործում են հոգեբուժական կաբինետներ, որտեղ հոգեբուժական ամբուլատոր պոլիկլինիկական ծառայություններ է մատուցում տվյալ համայնքի հոգեկան հիվանդներին միաժամանակ կաբինետային ծառայության մեջ առաջիկայում կներգրավենք հոգեբաններ: Մարզի մյուս համայնքներում՝ Ամասիայում, Աշոցքում ամբուլատոր պոլիկլինիկական ծառայություններ մատուցող բժշկական հաստատություններում նախատեսվում է ստեղծել հոգեբուժական կաբինետներ՝ ներգրավելով հոգեբանի հաստիք: Հոգեբուժական ծառայության մատչելիության ապահովման ուղղությամբ նախատեսվում է «Գյումրու միջազգային Կարմիր Խաչի անվան պոլիկլինիկա» և Ն. Ա. Մելիքյանի անվան թիվ 2 պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերություններում ձևավորել հոգեբուժական կաբինետներ:

5. ՀՀ Արարատի մարզպետարանի կողմից

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի «Ա. Հայրիյանի անվան Արմաշի առողջության կենտրոն» ՓԲԸ-ում իրականացվում է հիվանդների շուրջօրյա խնամք և անհրաժեշտ սպասարկում, իսկ տարածաշրջանային բժշկական կենտրոնները ապահովում են անհրաժեշտ ծառայությունների մատուցումը տեղերում:

6. ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի կողմից

Մարզի հոգեբուժական հիվանդանոցները, հոգեկան առողջության կենտրոնները և հոգեբույժների կաբինետները գտնվում են ՀՀ առողջապահության նախարարության ենթակայության տակ:

7. ՀՀ Սյունիքի մարզպետարանի կողմից

Նպատակ 6-ի 6-րդ կետի համաձայն նախատեսվում է այն մարզերում, որտեղ գործում են հոգեբուժական ստացիոնարներ, տվյալ մարզի տարածաշրջանների պոլիկլինիկաների հոգեբույժների կաբինետները, չփոխելով տեղակայումը, ներառել ստացիոնար ծառայություն իրականացնող կազմակերպության մեջ: Հայտնվում է, որ այս հարցը գտնվում է ուսումնասիրման և քննարկման փուլում:

8. ՀՀ Տավուշի մարզպետարանի կողմից

6-րդ կետի պահանջների կատարման նպատակով մարզի բոլոր բուժհաստատություններում իրականացվել են անհրաժեշտ ուսումնասիրություններ: Պարզվել է, որ 4 բժշկական կենտրոններում գործում են հոգեբուժական կաբինետներ՝ մեկական բժիշկ հոգեբույժ մասնագետով: Հոգեթերապևտի, կլինիկական հոգեբանի հաստիքներ պետական պատվերով ստացիոնար և ամբուլատոր պոլիկլինիկական ծառայություններում երբևէ չեն նախատեսվել: Արտահիվանդանոցային հոգեբուժական ծառայությունը ուժեղացնելու, հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց ինտեգրումը հասարակության մեջ իրականացնելու և շուրջօրյա խնամքի կարիք չունեցող հիվանդների համար ծառայությունների զարգացման նպատակով ՀՀ Տավուշի մարզպետի 12.05.2015 թ. թիվ 01/14.1/1637-15 գրությամբ առաջարկություններ են ներկայացվել ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարություն: Դրանք են.

- Մարզերում գործող բժշկական կենտրոններում բացել հոգեթերապևտների և կլինիկական հոգեբանների կաբինետներ,
- Պետական առողջապահական ծրագրերում ներառել համապատասխան մասնագետների նպատակային վերապատրաստում,
- Կազմակերպել ընտանեկան բժիշկների վերապատրաստման դասընթացներ՝ հոգեկան առողջության վերաբերյալ:

9. ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի կողմից

Վայոց ձորի մարզում հիվանդանոցների կազմում հոգեբուժական բաժանմունք չի բացվել՝ շենքային պայմաններ և համապատասխան կադրեր չլինելու պատճառով, որի մասին 30.05.2014 թ. թիվ 01/07.1/2632-14 գրությամբ տեղյակ է պահվել ՀՀ կառավարությանը:

10. ՀՀ Արմավիրի մարզպետարանի կողմից

ՀՀ Արմավիրի մարզի բուժհիմնարկների հոգեբուժական կաբինետների կարողությունները՝ տեխնիկական և կադրային հագեցվածությունը համապատասխանում է ՀՀ կառավարության 05.12.2002 թ. N 1936-Ն որոշման պահանջներին, որը թույլ է տալիս իրականացնել չափորոշիչներով նախատեսված արտահիվանդանոցային հոգեբուժական բուժօգնության ամբողջ ծավալը և հոգեբուժական ստացիոնարի անհրաժեշտությունը մարզում չկա, Երևան քաղաքին մոտ գտնվելու պատճառով:

11. ՀՀ Արագածոտնի մարզպետարանի կողմից

Հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածը և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածը՝ տեղեկացնում ենք, որ Հայաստանի

Հանրապետությունում հոգեկան առողջության պահպանման և բարելավման 2014-2019 թվականների ռազմավարությունը հավանության է արժանացել ՀՀ Արագածոտնի մարզպետարանում:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ մարզում հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձինք միշտ գտնվում են մարզի առողջապահական հիմնարկների ուշադրության տակ և սերտ համագործակցում ենք ՀՀ առողջապահության նախարարության հետ:

Ուսումնասիրելով ՀՀ մարզպետարանների կողմից տրամադրված տեղեկատվությունը՝ կարող ենք եզրակացնել, որ միջոցառմամբ նախատեսվող առաջարկությունների փաթեթ միայն մեկ մարզպետարանի կողմից է կազմվել:

Չի լուծվել մասնագիտացված հոգեբուժական հաստատությունների և առողջության առաջնային պահպանման ծառայություններ մատուցողների միջև անհրաժեշտ համագործակցության ապահովման խնդիրը: Այն մարզերի մարզպետարանները, որտեղ գործում են հոգեբուժական ստացիոնարներ, տեղեկատվություն չեն տրամադրել տվյալ մարզի տարածաշրջանների պոլիկլինիկաների հոգեբույժների կաբինետների ստացիոնար ծառայություն իրականացնող կազմակերպության մեջ ներառելու վերաբերյալ:

Այն մարզերում, որտեղ չկան հոգեբուժական ստացիոնարներ, առանձին ստացիոնարներ կամ բաժանմունքներ մարզային հիվանդանոցների կազմում չեն ձևավորվել: Եթե Վայոց ձորի մարզպետարանը տեղեկացրել է, որ շենքային պայմանների և համապատասխան կադրերի բացակայությունն է խոչընդոտում տվյալ միջոցառման իրականացմանը, որի մասին տեղյակ է պահվել ՀՀ կառավարությանը, ապա Արմավիրի, Տավուշի և Արագածոտնի մարզպետարանների պատասխան գրությունից կարող ենք հասկանալ, որ դրա անհրաժեշտությունը մարզերում չկա, ինչը չի կարող մտահոգիչ չլինել: Արմավիրի մարզի որոշ համայնքների հեռավորությունը մայրաքաղաքից մոտ 100 կմ է: Մինչդեռ տվյալ մարզում հոգեկան առողջության ապահովմանն ուղղված ծառայությունների մատչելիությանն ուղղված առաջարկություն ոչ միայն չի եղել, այլև Արմավիրի մարզպետարանը պատասխան գրությամբ հայտնել է, որ մարզի՝ Երևանին մոտ գտնվելու պատճառով հոգեբուժական ստացիոնարի ձևավորման անհրաժեշտություն չկա:

ՀՀ առողջապահության նախարարության կողմից 2015 թվականի մարտի 30-ին տրամադրված տեղեկատվության համաձայն՝ նախարարի համապատասխան հրամանով ձևավորվել է հանձնաժողով (բաղկացած 9 հոգուց՝ մեկը համաձայնությամբ), որը պետք է գնահատեր շուրջօրյա խնամքի կարիք չունեցող հիվանդների համար ծառայությունների զարգացման, Հայաստանի Հանրապետության մարզերում ստացիոնար և ամբուլատոր ծառայություն իրականացնող հոգեկան առողջության կենտրոնների ստեղծման, ծերունական հոգեբուժական հաստատությունների, ստորաբաժանումների ստեղծման հնարավորությունների կարողությունները: Հրամանի համաձայն՝ հանձնաժողովի նախագահը պետք է՝

- ուսումնասիրություններին մասնակից դարձնել ՀՀ մարզպետարանների համապատասխան աշխատակիցներին և*

- ուսումնասիրության արդյունքները համապատասխան առաջարկություններով մինչև 2015 թվականի սեպտեմբեր ամիսը ներկայացնելը ՀՀ առողջապահության նախարարին:

ՀՀ մարզպետարանների կողմից տրամադրված տեղեկատվությունից պարզ է դառնում, որ մարզպետարանները չեն իրականացրել կամ պատշաճ մասնակցություն չեն ունեցել ուսումնասիրություններին, կամ էլ պատշաճ ձևով չեն իրականացրել ուսումնասիրությունները՝ չապահովելով որակյալ արդյունքներ, առաջարկություններ:

Մինևույն ժամանակ ՀՀ առողջապահության նախարարության 2015 թվականի հոկտեմբերի 22-ի տրամադրած տեղեկության համաձայն՝ նշված միջոցառման արդյունքին հասնելու ուղղությամբ կազմվել և ՀՀ կառավարություն է ներկայացվել ծրագիր: Հարկ է նշել, որ ծրագիրը մշակվել է Ռազմավարությամբ նախատեսվող միջոցառումների գործնական իրականացումն ապահովելու նպատակով, որը նախատեսվում է ներկայացնել Համաշխարհային բանկին 2015թ. աշնանը: Մինչդեռ Ռազմավարության միջոցառումների իրականացումը նախատեսվում է 2014-2019 թվականներին, և մասնավորապես այս գործողության իրականացումը նախատեսված է 2014-2015 թվականներին:

Անդրադառնալով ծրագրին բովանդակային տեսանկյունից, պետք է նշել, որ մտահոգիչ է ենթաբաղադրիչ Գ-ի 4-րդ և 5-րդ կետերը: Նշված կետերով նախատեսվում է «Նուբարաշեն» հոգեբուժական կենտրոնի և «Նորք» հոգեբուժական կենտրոնի արդիականացում՝ այդ թվում մանկական հոգեբուժական բաժանմունքի ստեղծում, կարի արտադրամասի և ջերմոցի վերանորոգում/վերագործարկում, ատաղձագործական արտադրամասի հիմնում:

«Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի 19-րդ հոդվածում ամրագրվում է՝ «Սույն Կոնվենցիայի մասնակից պետությունները ճանաչում են հաշմանդամություն ունեցող անձանց՝ համայնքում ապրելու հավասար իրավունքը՝ մյուսների հետ հավասար հիմունքներով ընտրության հնարավորությամբ, ձեռնարկում են արդյունավետ և համապատասխան միջոցներ՝ օժանդակելու համար հաշմանդամություն ունեցող անձանց՝ այս իրավունքից լիակատար օգտվելուն, նրանց լիարժեք ներգրավվածությանը և մասնակցությանը համայնքում...»: Մինչդեռ նշված փակ տիպի հաստատությունների նման արդիականացումը չի բխում տվյալ դրույթի պահանջներից: Մասնավորապես միջազգային փորձից, ինչպես նաև կազմակերպության մի շարք ուսումնասիրություններից ելնելով՝ կարող ենք պնդել, որ փակ և կիսափակ հաստատությունում մանկական բաժանմունքի ստեղծումը ոչ թե կնպաստի հոգեկան առողջության խնդիրներ ունեցող երեխաների համայնքում ներառմանը, այլև կիսթանի վերջիններիս մեկուսացումը, կիսորացնի հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց նկատմամբ խարանն ու կարծրատիպերը: Նույնը կարող ենք ասել նաև նշված փակ հաստատություններում արտադրամասի հիմնման, կարի արտադրամասի և ջերմոցի վերանորոգման/վերագործարկման մասին:

Նպատակ 6, միջոցառում 6-ի իրականացումը գնահատվում է՝ չի իրականացվել:

Նպատակ 6, միջոցառում 7 - Ծերունական հոգեբուժական հաստատությունների/ ստորաբաժանումների ստեղծման հնարավորությունների ուսումնասիրություն և առաջարկությունների ներկայացում ՀՀ կառավարություն

Պատասխանատու՝ ՀՀ առողջապահության նախարարություն

Համակատարող՝ Համապատասխան հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ)

Նախատեսված արդյունքը՝ ըստ Միջոցառումների ցանկի – Տարբերակված մասնագիտացված հոգեկան առողջության ծառայությունների ստեղծման համար անհրաժեշտ ծառայությունների ձևավորում

Միջոցառման իրականացման մասին տրամադրված տեղեկատվություն

ՀՀ առողջապահության նախարարության կողմից (2015 թ. մարտի 30-ին տրամադրած տեղեկատվություն)

Շուրջօրյա խնամքի կարիք չունեցող հիվանդների համար ծառայությունների զարգացման, Հայաստանի Հանրապետության մարզերում ստացիոնար և ամբուլատոր ծառայություն իրականացնող հոգեկան առողջության կենտրոնների ստեղծման, ծերունական հոգեբուժական հաստատությունների, ստորաբաժանումների ստեղծման հնարավորությունների կարողությունների գնահատման նպատակով, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 16.12.2014 թ. «Պետության կողմից երաշխավորված անվճար հիվանդանոցային բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հոգեբուժական բժշկական կազմակերպություններում ուսումնասիրություններ կազմակերպելու մասին» թիվ 2973-Ա հրամանի համաձայն կիրականացվեն ուսումնասիրություններ:

2015 թ. հոկտեմբերի 22-ին ՀՀ առողջապահության նախարարությունը տեղեկատվություն չի տրամադրել, թե իրականացվել են արդյոք ուսումնասիրություններ և ներկայացվել են արդյոք առաջարկություններ ՀՀ կառավարություն:

Հետևաբար, միջոցառման կատարումը գնահատվում է՝ չի իրականացվել:

Նպատակ 7, միջոցառում 1 - Փորձական ծրագրի իրականացման շրջանակում Հայաստանի Հանրապետության երկու համայնքում հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց համար ստեղծել շուրջօրյա խնամքի տուն, որպես այլընտրանք Վարդենիսի նյարդահոգեբանական տուն-ինտերնատի

Պատասխանատու՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն

Համակատարող՝ ՀՀ մարզպետարաններ, Տեղական ինքնակառավարման մարմիններ (համաձայնությամբ), Համապատասխան հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ)

Նախատեսված արդյունքը՝ ըստ Միջոցառումների ցանկի – Երկու համայնքում առավելագույնը 30 անձի բնակության համար շուրջօրյա խնամքի տների առկայություն

Միջոցառման իրականացման մասին տրամադրված տեղեկատվություն

1. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից

«Բաց հասարակության հիմնադրամներ – Հայաստան» կազմակերպության աջակցությամբ իրականացվող փորձնական ծրագրի շրջանակում նախատեսված՝ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող 16 անձի համար ստեղծվելիք խնամքի տան վերանորոգման աշխատանքները ընթացքի մեջ են և ըստ նախնական գնահատումների, կավարտվեն և ծրագիրը կմեկնարկի 1-2 ամսից:

Ինչ վերաբերում է շուրջօրյա խնամքի տուն ստեղծելուն, որպես Վարդենիսի նյարդահոգեբանական տուն-ինտերնատի այլընտրանք, ապա «Ձորակ» հոգեկան առողջության 120 տեղանոց խնամքի տան ստեղծումը (2015 թ. հուլիս) ծառայում է հենց այդ նպատակին և պետք է դիտարկել որպես Վարդենիսի տուն-ինտերնատի այլընտրանք:

2. ՀՀ Լոռու մարզպետարանի կողմից

Նախատեսվում է սկզբնական շրջանում Լոռու մարզի Սպիտակ քաղաքում, ապա նաև Վանաձորում ստեղծել շուրջօրյա խնամքի տուն: Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության փորձագետների հետ քննարկվել են խնամքի կարիք ունեցող հիվանդների հարցը, նրանց են տրամադրվել տվյալներ այդ խմբի հիվանդների վերաբերյալ, առաջարկվել է համապատասխան տարածք Սպիտակ քաղաքում:

Քանի դեռ չկա նմանատիպ հաստատություն, չկան նաև համապատասխան իրավական ակտեր և այլն:

3. ՀՀ Տավուշի մարզպետարանի կողմից

Տավուշի մարզպետարանի կողմից բազմիցս գրավոր և բանավոր առաջարկություններ են ներկայացվել ՀՀ տարածքային և արտակարգ իրավիճակների նախարարություն՝ մարզում շուրջօրյա խնամքի կենտրոն բացելու վերաբերյալ /այդ թվում ՀՀ Տավուշի մարզպետի 04.10.2013 թ. թիվ 01/14.1/3875-13 գրությամբ/: Քանի որ մարզում չկա ստացիոնար հոգեբուժական հաստատություն և հիվանդները հիմնականում ուղեգրվում են հանրապետության տարբեր կլինիկաներ, որն առաջացնում է լրացուցիչ ֆինանսական ծախսեր, առաջարկվել է փորձնական ծրագրի շրջանակներում շուրջօրյա խնամքի տունը ստեղծել Իջևան քաղաքում /առկա է անհրաժեշտ տարածք/:

4. ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի կողմից

Վայոց ձորի մարզում շուրջօրյա խնամքի տուն ստեղծելու անհրաժեշտություն չի առաջացել: Մարզպետարանում և համայնքներում, հասարակական կազմակերպությունների հետ համատեղ, պարբերաբար աշխատանքներ են տարվում հաշմանդամություն ունեցող անձանց հասարակությանը ինտեգրելու, նրանց զբաղվածության խնդիրները լուծելու հարցում:

5. ՀՀ Կոտայքի մարզպետարանի կողմից

Մշտապես խնամքի կարիք չունեցող հոգեկան առողջության խնդիրներ ունեցող մարդկանց հասարակության մեջ ինտեգրելուն ուղղված աշխատանքների վերաբերյալ հայտնում եմ, որ այդ նպատակով համայնքային ծառայություններ ստեղծելու հարցը կքննարկվի համայնքներում:

6. ՀՀ Արարատի մարզպետարանի կողմից

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի «Ա. Հայրիյանի անվան Արմաշի առողջության կենտրոն» ՓԲԸ-ում իրականացվում է հիվանդների շուրջօրյա խնամք և անհրաժեշտ սպասարկում, իսկ տարածաշրջանային բժշկական կենտրոնները ապահովում են անհրաժեշտ ծառայությունների մատուցումը տեղերում:

7. ՀՀ Արագածոտնի մարզպետարանի կողմից

Հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածը և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածը՝ տեղեկացնում ենք, որ Հայաստանի Հանրապետությունում հոգեկան առողջության պահպանման և բարելավման 2014-2019 թվականների ռազմավարությունը հավանության է արժանացել ՀՀ Արագածոտնի մարզպետարանում:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ մարզում հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձինք միշտ գտնվում են մարզի առողջապահական հիմնարկների ուշադրության տակ և սերտ համագործակցում ենք ՀՀ առողջապահության նախարարության հետ:

8. ՀՀ Գեղարքունիքի, Արմավիրի, Արագածոտնի և Շիրակի մարզպետարանների կողմից

Տվյալ միջոցառման իրականացման վերաբերյալ տեղեկատվություն Շիրակի, Արմավիրի և Գեղարքունիքի մարզպետարանների կողմից չի տրամադրվել:

9. ՀՀ Սյունիքի մարզպետարանի կողմից

Սյունիքի մարզի Արծվանիկ գյուղական համայնքում գործում է «Առաքելություն Հայաստան» ԲՀԿ կողմից ստեղծված «Արծվաբույն» տարեցների շուրջօրյա սպասարկման կենտրոնը: Կենտրոնում այժմ սպասարկվում են 8 շահառուներ՝ հիմնականում հոգեկան առողջության շեղումներ ունեցող անձինք: Կենտրոնը ունի ընդլայնվելու հնարավորություն, որի արդյունքում շուրջ 30 շահառու ևս կարող են սպասարկվել այստեղ: Այս հարցը նույնպես գտնվում է քննարկման փուլում:

Ըստ միջոցառման արդյունքի՝ 2015 թվականի ավարտին հանրապետության երկու համայնքում պետք է ձևավորված լինե՞ր շուրջօրյա խնամքի տուն: Միջոցառման պատասխանատու հանդիսացող ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության տրամադրած տեղեկատվության համաձայն՝ արդեն իրականացվել են համապատասխան աշխատանքներ և Սպիտակ համայնքում սահմանված ժամկետներում կգործի շուրջօրյա խնամքի տուն: Սակայն «Չորակ» հոգեկան առողջության 120 տեղանոց խնամքի տան

ստեղծումը չի կարող դիտարկվել այս միջոցառման շրջանակներում, քանի որ այն նախատեսված է ավելի քան 30 անձի համար. շուրջօրյա խնամքի տները, որոնք ձևավորվելու էին որպես այլընտրանք Վարդենիսի նյարդահոգեբանական տուն ինտեռնատին, պետք է նախատեսված լինեին առավելագույնը 30 անձի բնակության համար:

Ինչ վերաբերում է ՀՀ մարզպետարանների կողմից տրամադրված տեղեկատվությանը, հարկ է նշել, որ որոշ մարզպետարաններ տեղեկատվությանը պատասխանել են շատ ընդհանուր, նույնիսկ վերացական՝ չանդրադառնալով ոչ միայն այս միջոցառման, նաև մյուս միջոցառումների իրականացմանը, որոնց պատասխանատու կամ համակատարող են հանդիսանում: Տպավորություն է ստեղծվում, որ միջոցառման պատասխանատու մարմինը բավարար կարգով չի համակարգել միջոցառման իրականացման ընթացքը, անհրաժեշտ համագործակցություն և կարիքի գնահատում չի իրականացվել:

Միջոցառման իրականացումը գնահատվում է՝ իրականացվել է մասամբ:

Նպատակ 7, միջոցառում 2 - Փորձնական ծրագրի շրջանակներում մասնագետների վերապատրաստում

Պատասխանատու՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն

Համակատարող՝ ՀՀ կրթության և գիտության նախարարություն, ՀՀ առողջապահության նախարարություն, Համապատասխան հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ)

Նախատեսված արդյունքը՝ ըստ **Միջոցառումների ցանկի** – Մասնագիտական անհրաժեշտ հմտություններ ունեցող աշխատուժի առկայություն համայնքահեն ծառայությունների իրականացման համար

Միջոցառման իրականացման մասին տրամադրված տեղեկատվություն

Միջոցառման իրականացման վերաբերյալ տեղեկատվություն չի տրամադրվել:

Միջոցառման կատարումը գնահատվում է՝ չի իրականացվել:

Այսպիսով, 2014-2015 թթ. նախատեսված 5 միջոցառումներից ոչ մեկը չի իրականացվել ամբողջությամբ, մասամբ իրականացվել է մեկ միջոցառում: Մասամբ իրականացված միջոցառման պատասխանատու է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը, չիրականացված միջոցառումների պատասխանատու՝ ՀՀ առողջապահության նախարարությունը (2 միջոցառում), ՀՀ առողջապահության նախարարությունը և ՀՀ մարզպետարանները (1 միջոցառում), ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը (1 միջոցառում):

Խումբ 3. Միջոցառումներ, որոնց իրականացումը պետք է սկսվի և ավարտվի 2015 թ.

2015 թ. նախատեսվում է իրականացնել 4 միջոցառում: Այս միջոցառումների պատասխանատու է ՀՀ առողջապահության նախարարությունը (2 միջոցառում) և ՀՀ առողջապահության նախարարությունն ու ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը համատեղ (2 միջոցառում)

Նպատակ 2, միջոցառում 2 - Հոգեկան առողջության ոլորտի մասնագետների գործունեության էթիկայի կանոնների մշակում

Պատասխանատու՝ ՀՀ առողջապահության նախարարություն, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն

Համակատարող՝ ՀՀ կրթության և գիտության նախարարություն, ԲՈՒՀ-եր (համաձայնությամբ), Համապատասխան հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ)

Նախատեսված արդյունքը՝ ըստ Միջոցառումների ցանկի – Հոգեկան առողջության ոլորտում գործող մասնագետների էթիկայի կանոնների առկայություն, պացիենտ-մասնագետ շփումներում էթիկական նորմերի կիրառում և պահպանում

Միջոցառման իրականացման մասին տրամադրված տեղեկատվություն

1. ՀՀ առողջապահության նախարարության կողմից

Հոգեկան առողջության ոլորտի մասնագետների գործունեության էթիկայի կանոնները համակատարող նախարարությունների հետ համատեղ գտնվում է մշակման փուլում:

2. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից

Այն միջոցառումները, որոնց սույն տեղեկանքում (տեղեկատվության հարցմանը պատասխան է տրվել տեղեկանքի ձևով) անդրադարձ չեղան, դրանք դեռևս չեն իրականացվել և պետք է իրականացվեն պատասխանատու կատարողի՝ ՀՀ առողջապահության նախարարության հետ համատեղ:

Հաշվի առնելով ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից տրամադրված տեղեկատվությունը և որ ՀՀ կրթության և գիտության նախարարությունը տեղեկատվություն չի տրամադրել՝ միջոցառման կատարումը գնահատվում է՝ չի իրականացվել:

Նպատակ 3, միջոցառում 2 - ԲՈՒՀ-երի և հոգեկան առողջության ծառայությունների միջև համագործակցության մեխանիզմների մշակում

Պատասխանատու՝ ՀՀ առողջապահության նախարարություն

Համակատարող՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, ՀՀ կրթության և գիտության նախարարություն, ԲՈՒՀ-եր (համաձայնությամբ)

Նախատեսված արդյունքը՝ ըստ Միջոցառումների ցանկի – Համագործակցության պայմանագրերի կնքում

Միջոցառման իրականացման մասին տրամադրված տեղեկատվություն

ՀՀ առողջապահության նախարարության կողմից

ԲՈՒՀ-երի և հոգեբուժական հաստատությունների միջև որպես համագործակցության մեխանիզմ առաջարկվում է հուշագրերի կնքումը: Հայտնում եմ, որ մինչև սույն թվականի նոյեմբերի 30-ը մշակվելու է և հոգեբուժական հաստատություններին է տրամադրվելու ԲՈՒՀ-երի հետ համագործակցության հուշագրի օրինակելի ձևը:

Հաշվի առնելով, որ միջոցառման կատարումը նախատեսված է 2015 թվականին, իսկ համագործակցության հուշագրի օրինակելի ձևը մշակվելու և հոգեբուժական հաստատություններին է տրամադրվելու մինչև նոյեմբերի 30-ը՝ պարզ չէ, թե մեկ ամսում հնարավոր է պայմանագրերի կնքումը, թե ոչ: Իսկ պայմանագրերի կնքումը տվյալ միջոցառման արդյունքն է:

Միջոցառման կատարումը գնահատվում է՝ իրականացվել է մասամբ:

Նպատակ 5, միջոցառում 5 - Համաժողովների, գիտագործնական սեմինարների կազմակերպում տարբեր շահառուների ներգրավմամբ (հոգեկան առողջության ոլորտի առաջնային և երկրորդային օղակի մասնագետներ, լրագրողներ, իրավաբաններ, գործատուներ և այլն)

Պատասխանատու՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, ՀՀ առողջապահության նախարարություն

Համակատարող՝ ՀՀ կրթության և գիտության նախարարություն, Համապատասխան հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ)

Նախատեսված արդյունքը՝ ըստ Միջոցառումների ցանկի – Դիրքորոշումների փոփոխություն, մասնագիտական մոտեցումների նորմավորում հոգեկան առողջության խնդիրների շուրջ, հոգեկան առողջության նոր դիսկուրսի ձևավորում

Միջոցառման իրականացման մասին տրամադրված տեղեկատվություն

1. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտը պարբերաբար կազմակերպել է վերապատրաստման դասընթացներ համակարգի տուն ինտերնատների բուժանձնակազմի, հոգեբանների և սոցիալական աշխատողների համար՝ «Հոգեկան առողջության խնդիրներ

ունեցող անձանց հետ տարվող աշխատանքի առանձնահատկությունները» թեմայով: 2015 թվականի ընթացքում կայացել է 4 դասընթաց, յուրաքանչյուրը 5-օրյա տևողությամբ, որոնց մասնակցել է ոլորտի շուրջ 130 աշխատող: Ունկնդիրներին ներկայացվել են հոգեկան առողջության ոլորտի օրենսդրությունը և միջազգային փորձը, հոգեկան առողջություն, պսիխոհիգիենա, հոգեկան առողջության խանգարումներ ունեցող անձանց մատուցվող այլընտրանքային ծառայությունների նոր մոդելները, դրանց ձևերն ու տեսակները, կլինիկական հոգեբանությունը և հոգեբուժությունը, հոգեբանական աշխատանքի առանձնահատկությունները և մեթոդները:

Վերապատրաստման դասընթացները կրում են շարունակական բնույթ:

2. ՀՀ առողջապահության նախարարության կողմից

2015 թվականին իրականացվել են իրազեկման աշխատանքներ: Հոգեկան խանգարումներով տառապող անձանց սոցիալապես անապահովության, կարծրատիպերի փոփոխման նպատակով հունվարի 15-ին «Բլից ինֆո» մամուլի ակումբում կազմակերպվել է մամուլի ասուլիս Հոգեբույժների ասոցիացիայի նախագահ Արմեն Սողոյանի մասնակցությամբ: ՀՀ ԱՆ գլխավոր հոգեբույժ Սամվել Թորոսյանի մասնակցությամբ մարտի 6-ին կայացել է մամուլի ասուլիս «Մեդիա կենտրոնում»: Բանախոսը հանրությանը ներկայացրել է հոգեկան խանգարումներ ունեցող մարդկանց մեկուսացման խնդիրը: Մայիսի 29-ին «Իրավունք» թերթում ՀՀ ԱՆ գլխավոր հոգեբույժ Սամվել Թորոսյանի հետ հարցազրույց է տպագրվել հոգեկան առողջության հարցերի շուրջ: Հոկտեմբերի 10-ը Հոգեկան առողջության համաշխարհային ֆեդերացիան (ՀԱՀՖ) 1992 թվականից հռչակել է Հոգեկան առողջության համաշխարհային օր: Իրականացվել է մամուլի ասուլիս Հոգեբույժների ասոցիացիայի նախագահ Արմեն Սողոյանի մասնակցությամբ: Միաժամանակ, հոկտեմբերին ՀՀ առողջապահության նախարարության պատվերով Արմենյուզ հեռուստաընկերությամբ հեռարձակվող «Ապրեցեք երկար» հաղորդաշարում կրկին անդրադարձ կլինի Հոգեկան առողջության համաշխարհային օրվան՝ նպատակ ունենալով մեկ անգամ ևս հասարակության, կազմակերպությունների և անհատների ուշադրությունը հրավիրել հոգեկան առողջության հիմնախնդիրների վրա:

Տրամադրված տեղեկատվության համաձայն՝ չեն իրականացվել համաժողովներ, գիտագործնական սեմինարներ չեն կազմակերպվել լրագրողների, իրավաբանների, գործատուների և այլ շահառուների ներգրավմամբ:

Միջոցառման իրականացումը գնահատվում է՝ իրականացվել է մասամբ:

Նպատակ 6, միջոցառում 11 – Հոգեբուժական ծառայությունում ձևավորել մեկ ընդհանուր էլեկտրոնային տվյալների բազա

Պատասխանատու՝ ՀՀ առողջապահության նախարարություն

Նախատեսված արդյունքը՝ ըստ Միջոցառումների ցանկի – Հոգեկան առողջության ծառայության կունենա մեկ ընդհանուր ավտոմատ տեղեկատվական համակարգի

առկայություն, ինչը հնարավորություն կտա ավելի արագ և արդյունավետ կազմակերպել օգնությունը

Միջոցառման իրականացման մասին տրամադրված տեղեկատվություն

ՀՀ առողջապահության նախարարության կողմից

Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի հոկտեմբերի 25-ի N 43 արձանագրային որոշմամբ ստեղծվում է «Հայաստանի Հանրապետության առողջապահության ոլորտում միասնական էլեկտրոնային տեղեկատվական համակարգ», որն իր մեջ ընդգրկում է բազում առողջապահական, ինչպես նաև հոգեբուժությանն առնչվող խնդիրների լուծումներ: Առողջապահության ոլորտում միասնական էլեկտրոնային տեղեկատվական համակարգը գտնվում է փորձարարական (պիլոտային) փուլում, ավարտից և արդյունքների ամփոփումից հետո կքննարկվեն համակարգից դուրս մնացած խնդիրները:


Միջոցառման կատարումը գնահատվում է՝ իրականացվել է մասամբ:

Այսպիսով, 2015 թ. նախատեսված 4 միջոցառումներից 3-ը գնահատվել է մասամբ իրականացված, մեկը՝ չիրականացված: Մասամբ իրականացված միջոցառումներից երկուսի պատասխանատու է ՀՀ առողջապահության նախարարությունը, մյուս միջոցառումները՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը և ՀՀ առողջապահության նախարարությունը համատեղ, չիրականացված միջոցառման պատասխանատու է ՀՀ առողջապահության նախարարությունը և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը համատեղ:

Այսպիսով, առաջին, երկրորդ և երրորդ խմբերի գնահատված 11 միջոցառումներից՝

- իրականացվել է՝ մեկ միջոցառում,*
- իրականացվել է մասամբ՝ չորս միջոցառում,*
- չի իրականացվել՝ վեց միջոցառում (տե՛ս Գծապատկեր 1):*

Առաջին, երկրորդ և երրորդ խմբերի միջոցառումների իրականացման պատկերը



Իրականացված միջոցառման պատասխանատու մարմինը ՀՀ էկոնոմիկայի նախարարությունն է:

Մասամբ իրականացված միջոցառումների պատասխանատու մարմիններն են՝

- ՀՀ առողջապահության նախարարությունը (2 միջոցառում),
- ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը (1 միջոցառում),
- ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը, ՀՀ առողջապահության նախարարությունը (1 միջոցառում):

Չիրականացված միջոցառումների պատասխանատու մարմիններն են՝

- ՀՀ առողջապահության նախարարությունը (3 միջոցառում),
- ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը (1 միջոցառում),
- ՀՀ առողջապահության նախարարությունը, ՀՀ մարզպետարանները (1 միջոցառում),
- ՀՀ առողջապահության նախարարությունը, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը (1 միջոցառում):

Խումբ 4. Միջոցառումներ, որոնց իրականացումը պետք է սկսվի 2014 կամ 2015 թվականներին և ավարտվի 2016, 2018 կամ 2019 թվականներին

14 միջոցառման իրականացման սկիզբը նախատեսված է 2014 կամ 2015 թթ., ավարտը՝ 2016, 2018 կամ 2019 թթ.: Այս միջոցառումների կատարման պատասխանատու են

- ՀՀ առողջապահության նախարարությունը (5 միջոցառում),
- ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը (1 միջոցառում),

- ՀՀ կրթության և գիտության նախարարությունը (1 միջոցառում),
- ՀՀ արտաքին գործերի նախարարությունը (1 միջոցառում),
- ՀՀ առողջապահության նախարարությունը, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը (3 միջոցառում),
- ՀՀ առողջապահության նախարարությունը, ՀՀ մարզպետարանները (1 միջոցառում):

Նպատակ 5, միջոցառում 6 - Հոգեկան առողջության ոլորտում գործունեություն իրականացնող հանրային ծառայողների իրազեկման աշխատանքների իրականացում, դասընթացների կազմակերպում

Պատասխանատու՝ ՀՀ առողջապահության նախարարություն

Կատարման ժամկետը՝ 2014 թվական և շարունակաբար

Համակատարող՝ Համապատասխան հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ)

Նախատեսված արդյունքը՝ ըստ Միջոցառումների ցանկի – Հոգեկան առողջության ծառայությունների կազմակերպման խնդիրներին իրազեկ մասնագետներ կառավարման ոլորտում

Միջոցառման իրականացման մասին տրամադրված տեղեկատվություն

ՀՀ առողջապահության նախարարության կողմից

Դասընթացների միջոցով կառավարման ոլորտում հոգեկան առողջության ծառայությունների կազմակերպման խնդիրներին իրազեկ մասնագետներ ապահովելու նպատակով, սույն թվականի հուլիսի 30-ին և 31-ին Ակադեմիկոս Ս.Խ.Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտում կազմակերպվել են սեմինարներ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի և ՀՀ կրթության և գիտության նախարարությունների, Երևանի քաղաքապետարանի, ՀՀ մարզպետարանների և հասարակական կազմակերպությունների հոգեկան առողջության ոլորտում գործունեություն իրականացնող հանրային 49 ծառայողների մասնակցությամբ: Մասնակիցներին տրվել են հավաստագրեր:

Միջոցառման կատարումը նախատեսվում է 2014 թվականին և շարունակաբար, սակայն 2014 թվականին տվյալ միջոցառման արդյունքին հասնելու համար աշխատանքներ չեն կատարվել:

Հետևաբար, միջոցառման կատարումը գնահատվում է՝ սկսվել է ուշացումով:

Նպատակ 6, միջոցառում 10 - Ընդհանուր առողջապահական ծախսերից հոգեկան առողջության արտահիվանդանոցային ծառայությանը հատկացվող ֆինանսական միջոցների շարունակական ավելացմանը ուղղված առաջարկների ներկայացում

Պատասխանատու՝ ՀՀ առողջապահության նախարարություն

Համակատարող՝ Տեղական ինքնակառավարման մարմիններ, Դոնոր կազմակերպություններ (համաձայնությամբ)

Կատարման ժամկետը՝ 2014 թվական և շարունակաբար

Նախատեսված արդյունքը՝ ըստ Միջոցառումների ցանկի – Արտահիվանդանոցային ծառայությունների բարելավման և զարգացման արդյունքում հոսպիտալացման դեպքերի նվազեցում

Միջոցառման իրականացման մասին տրամադրված տեղեկատվություն

ՀՀ առողջապահության նախարարության կողմից (2015 թ. մարտի 30-ին տրամադրած տեղեկատվություն)

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2014 թվականի ապրիլի 16-ի թիվ 811-Ա հրամանով հաստատվել են պետության կողմից երաշխավորված հոգեբուժական և նարկոլոգիական հիվանդանոցային և արտահիվանդանոցային բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող բժշկական կազմակերպությունների պայմանագրային գումարների հաշվարկման և ֆինանսավորման նորմատիվները, որի հիման վրա, այս տարի նշված ծառայություններ մատուցող կազմակերպություններին լրացուցիչ հատկացվել է 150,0 մլն. դրամ (տե՛ս հավելված Գ.):

Ներկայացվում է ՀՀ 2014 թվականի պետական բյուջեի «Հիվանդանոցային ծառայություններ» խմբի «Հոգեկան և նարկոլոգիական բժշկական օգնության ծառայություններ» ծրագրով հատկացված լրացուցիչ միջոցների բաշխումը՝ ըստ կազմակերպությունների

N	Կազմակերպության անվանումը	Գումար (հազար դրամ)
	ԸՆԴԱՄԵՆԸ-որից	150.000,0
1	Սևանի հոգեբուժական հիվանդանոց ՓԲԸ	11.871,7
2	Ակ. Ա.Հայրիյանի անվ. Արմաշի ԱԿ ՓԲԸ	8.113,0
3	Բուբարաշեն հոգեբուժական կենտրոն ՓԲԸ	44.244,4
4	Նորք հոգեբուժական կենտրոն ՓԲԸ	18.293,5
5	Ավան հոգեկան առողջության կենտրոն ՓԲԸ	21.168,0
6	Նարկոլոգիական հանրապետական կենտրոն ՓԲԸ	13.122,8
7	Ներոզների կլինիկա ՓԲԸ	7.025,0
8	Գյումրիի հոգեկան առողջության կենտրոն ՓԲԸ	6.084,6
9	Սյունիքի մարզային նյարդահոգեբանական դիսպանսեր ՓԲԸ	11.114,2
10	Լոռու մարզային հոգենյարդաբանական դիսպանսեր ՓԲԸ	8.962,8

(2015 թ. հոկտեմբերի 22-ին տրամադրած տեղեկատվություն)

2015 թվականի հոգեկան և նարկոլոգիական հիվանդություններ իրականացնող կազմակերպությունների պայմանագրային գումարները 2014 թվականի համեմատ աճել են

371,6 մլն դրամով կամ 13 տոկոսով, որից արտահիվանդանոցային ծառայությունների աճը կազմել է 147,0 մլն դրամ կամ 50 տոկոս: 2014 թվականի ընթացքում վերաբաշխման միջոցով ավելացված 150,0 մլն դրամը ամբողջությամբ ուղղվել է հիվանդանոցային ծառայություններին:

Արտահիվանդանոցային ծառայությանն ուղղված ֆինանսական լրացուցիչ հատկացումներ են կատարվել միայն 2015 թվականին: Միջոցառմամբ նախատեսվում էր ընդհանուր առողջապահական ծախսերից հոգեկան առողջության արտահիվանդանոցային ծառայությանը հատկացվող ֆինանսական միջոցների ավելացմանն ուղղված առաջարկների ներկայացում և հետևաբար արտահիվանդանոցային ծառայությանն ուղղված ֆինանսական լրացուցիչ հատկացումների կատարում 2014 թվականին և շարունակաբար, մինչդեռ 2014 թվականին հոգեբուժական կազմակերպություններին լրացուցիչ հատկացված 150,0 մլն դրամն ամբողջությամբ ուղղվել է հիվանդանոցային ծառայությանը:

Միջոցառման կատարումը գնահատվում է՝ սկսվել է ուշացումով:

Նպատակ 6, միջոցառում 3 - Երևան քաղաքի բազմապրոֆիլ հիվանդանոցներում հոգեբուժական բաժանմունքների, այդ թվում նաև առաջին էպիզոդների բաժանմունքների ստեղծման կարողությունների գնահատում և առաջարկությունների ներկայացում ՀՀ կառավարություն

Պատասխանատու՝ ՀՀ առողջապահության նախարարություն

Համակատարող՝ Համապատասխան հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ)

Կատարման ժամկետը՝ 2015 թվական և շարունակաբար

Նախատեսված արդյունքը՝ ըստ Միջոցառումների ցանկի – Կրթաբարձրացվի հոգեկան և ֆիզիկական խնդիրներ ունեցողների բուժման արդյունավետությունը և կնվազեցվի ստիգմայի աստիճանը

Միջոցառման իրականացման մասին տրամադրված տեղեկատվություն

ՀՀ առողջապահության նախարարության կողմից

ՀՀ ԱՆ «Նորք» հոգեբուժական կենտրոն» ՓԲԸ կազմում գործում է «Առաջին փսիխոտիկ էպիզոդի բաժանմունքը»: Աշխատանքները տարվում են խմբային սկզբունքով, որտեղ ներառված են հոգեբույժ, հոգեբան և սոցիալական մասնագետ: Կենտրոնում ամբուլատոր բուժում ստացել են արդեն 1000-ից ավելի հոգեկան խնդիրներ ունեցող անձինք, որոնց բուժապասարկումը, խորհրդատվությունը, հոգեբուժական աջակցությունը իրականացվում է առ այսօր: Բաժինն իրականացնում է տարատեսակ խմբային աշխատանքներ հիվանդների և իրենց հարազատների հետ, այդ թվում հոգեկրթական, սոցիալական հմտությունների ուսուցման և իմացական գործընթացների վերականգնման վարժանքները: 2015 թվականի մարտի 13-ից ՀՀ Առողջապահության նախարարի թիվ 572-Ա հրամանի համաձայն «Նորք»

հոգեբուժական կենտրոն» ՓԲԸ-ի «Առաջին փսիխոտիկ էպիզոդի բաժանմունքում իրականացվում է «արտահիվանդանոցային ծառայություն ցերեկային ստացիոնարում, հոգեկան հիվանդների արդյունավետ բուժման կազմակերպումը «Զիպրեքսա» դեղով» ծրագիրը:

Այդ ծրագրով մոտ 300 հիվանդի տրվել է հնարավորություն անվճար ստանալ ամբուլատոր հոգեբուժական, հոգեսոցիալական աջակցություն, այդ թվում նաև նոր սերնդի արդյունավետ դեղեր:

Հետագայում նմանատիպ բաժանմունքների ստեղծումը Երևանի այլ համայնքներում և ՀՀ մարզերում թույլ կտա իրականացնել հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց բուժումը առանց նրանց կտրելու իրենց սոցիալական միջավայրից:

ՀՀ առողջապահության նախարարությունը տեղեկատվություն չի տրամադրել, թե արդյոք գնահատվել են Երևան քաղաքի բազմապրոֆիլ հիվանդանոցներում հոգեբուժական բաժանմունքների, այդ թվում նաև առաջին էպիզոդների բաժանմունքների ստեղծման կարողությունները և ներկայացվել են արդյոք առաջարկություններ ՀՀ կառավարություն:

Միջոցառման կատարումը գնահատվում է՝ չի սկսվել:

Նպատակ 1, միջոցառում 1 - Հոգեկան առողջության ոլորտը կարգավորող ՀՀ օրենսդրության վերլուծություն և առաջարկների մշակում

Պատասխանատու՝ ՀՀ առողջապահության նախարարություն, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն

Համակատարող՝ ՀՀ կրթության և գիտության նախարարություն, Համապատասխան հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ)

Կատարման ժամկետը՝ 2014-2016 թվականներ

Նախատեսված արդյունքը՝ ըստ Միջոցառումների ցանկի –Օրենսդրության վերլուծություն, և ըստ արդյունքների՝ «Հոգեբուժական օգնության մասին» ՀՀ օրենքում և «Արտահիվանդանոցային և հիվանդանոցային հոգեբուժական բժշկական օգնության տրամադրման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման մեջ փոփոխություններ կատարելու առաջարկությունների ներկայացում ՀՀ կառավարություն

Միջոցառման իրականացման մասին տրամադրված տեղեկատվություն

1. ՀՀ առողջապահության նախարարության կողմից

ՀՀ առողջապահության նախարարության կողմից աշխատանքային կարգով վերլուծության է ենթարկվել հոգեկան առողջության ոլորտը կարգավորող օրենսդրությունը:

Վերլուծության արդյունքում «Հոգեբուժական օգնության մասին» ՀՀ օրենքում, որպես հոգեկան առողջության ոլորտը կարգավորող հիմնական ակտում, ի հայտ են բերվել մի շարք

թերություններ ու բացթողումներ, որոնք թույլ չեն տալիս համալիր կերպով կարգավորման ենթարկել հոգեկան առողջության ոլորտը:

Մասնավորապես գործող օրենքում թերի են կարգավորված հոգեկան խանգարում ունեցող անձանց իրավունքներին վերաբերող դրույթները, կարգավորված չեն դատահոգեբուժական փորձաքննությունների տեսակները և ժամկետները, ինչպես նաև հարկադիր բուժման դատահոգեբուժական փորձաքննության ժամկետները, բացակայում են հոգեկան խանգարում ունեցող անձանց վերաբերյալ բժշկական գաղտնիք համարվող տեղեկություններին մշակմանը և փոխանցմանը վերաբերող դրույթները: Օրենքում օգտագործվում են հասկացություններ, որոնք չեն կիրառվում, առկա են օրենսդրական տեխնիկայի կանոնների մի շարք խախտումներ, օրենքի կառուցվածքը համակարգված չէ և այլն:

Վերը նշված թերությունները վերացնելու, ինչպես նաև հոգեկան առողջության ոլորտը կարգավորող հիմնական ակտը թե կառուցվածքային և թե բովանդակային տեսանկյունից հնարավորինս կատարելագործելու նպատակով՝ մշակվել և ՀՀ կառավարություն է ներկայացվել «Հոգեբուժական օգնության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը և դրանից բխող մի շարք օրենքների նախագծերի փաթեթ: «Հոգեբուժական օգնության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծով նոր խմբագրությամբ է շարադրվել գործող օրենքի ամբողջ տեքստը:

2. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը «Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստան» կազմակերպության աջակցությամբ 2014 թվականին իրականացրել է հոգեկան առողջության ոլորտի օրենսդրության ուսումնասիրություն և վերլուծություն, այնուհետև այդ վերլուծության հիման վրա մշակել «Շուրջօրյա խնամքի տներում հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց խնամքի և սոցիալական այլ ծառայությունների տրամադրման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ, որը սահմանված կարգով դրվել է շրջանառության մեջ: Նշված նախագծով սահմանվում են շուրջօրյա խնամքի տան հասկացությունը, շուրջօրյա խնամքի տներում հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց խնամքի տրամադրման նպատակը և սկզբունքները, դրանց ներկայացվող ընդհանուր պահանջները, կարգավորվում են շուրջօրյա խնամքի տներում հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց ընդունելության և դուրսգրման, խնամքի և սոցիալական ներառմանն աջակցելու հետ կապված հարաբերությունները:

Միաժամանակ մշակվել և ՀՀ կառավարություն են ներկայացվել առաջարկություններ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անօթևան անձանց խնամքի և սոցիալական այլ ծառայությունների տրամադրման տարբեր մոդելների և մոտեցումների և դրանք մեր երկրում ներդնելու նպատակահարմարության վերաբերյալ առաջարկություններ:

Միջոցառման իրականացումը գնահատվում է՝ սկսվել է ժամանակին:

Միաժամանակ հարկ է նշել, որ միայն մեկ փաստը այն մասին, որ նշված նախագծի համաձայն՝ «Հոգեբուժական օգնության մասին» ՀՀ օրենքը ոչ թե հոգեկան առողջության մասին» ՀՀ օրենքի կփոխարինվի, այլ «Հոգեբուժական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքի, խիստ մտահոգիչ է: Մտացվում է, որ տվյալ օրենքը, որը պետք է ամբողջությամբ կարգավորի հոգեկան առողջության ոլորտը, նման մեծ փոփոխության է ենթարկվում, սակայն չի լուծում խնդիրը՝ անդրադառնալով միայն հոգեբուժական օգնությանը և սպասարկմանը:

Նպատակ 1, միջոցառում 2 - «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի կամընտիր արձանագրության վավերացմանն ուղղված նախապատրաստական աշխատանքների իրականացում

Պատասխանատու՝ ՀՀ արտաքին գործերի նախարարություն

Համակատարող՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն

Կատարման ժամկետը՝ 2015-2016 թվականներ

Նախատեսված արդյունքը՝ ըստ Միջոցառումների ցանկի – «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի կամընտիր արձանագրության վավերացում

Միջոցառման իրականացման մասին տրամադրված տեղեկատվություն

ՀՀ արտաքին գործերի նախարարության կողմից

«Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» կոնվենցիայի կամընտիր արձանագրության վավերացման գործընթացը սկսելու համար, անհրաժեշտ է որպեսզի ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը, որն իրավասու է նախապատրաստական աշխատանքներն իրականացնելու հարցում, հանդես գա այն վավերացնելու նպատակահարմարության վերաբերյալ առաջարկով:

Միջոցառման կատարումը գնահատվում է՝ չի սկսվել:

Նպատակ 2, միջոցառում 3 - Հոգեկան առողջության ոլորտի մասնագետների որակավորման բնութագրերի մշակում և հաստատում՝ ըստ կրթական մակարդակների

Պատասխանատու՝ ՀՀ կրթության և գիտության նախարարություն

Համակատարող՝ ՀՀ առողջապահության նախարարություն, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, ԲՈՒՀ-եր (համաձայնությամբ)

Կատարման ժամկետը՝ 2015-2016 թվականներ

Նախատեսված արդյունքը՝ ըստ Միջոցառումների ցանկի – Կրթական վերջնական արդյունքներին ներկայացվող պահանջների համապատասխանեցում աշխատաշուկայի պահանջներին և որակավորումների ազգային շրջանակին

Միջոցառման իրականացման մասին տրամադրված տեղեկատվություն

1. ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից

ՀՀ ԿԳ նախարարի հրամանով ստեղծվել է հոգեկան առողջության ոլորտի (հոգեբանություն, սոցիալական աշխատանք, հոգեբուժություն և կլինիկական հոգեբուժություն) մասնագետներից կազմված աշխատանքային խումբ՝ ՀՀ կառավարության 2014 թ. ապրիլի 17-ի նիստի N 15 արձանագրային որոշման հավելված 2-ի 2-րդ կետի 3-րդ ենթակետի և 3-րդ կետի 1-ին ենթակետի միջոցառումների կատարումն ապահովելու նպատակով:

Աշխատանքային խումբը ռազմավարության կատարումն ապահովող միջոցառումների ցանկով նախատեսված աշխատանքների վերջնական արդյունքները կամփոփի սահմանած ժամկետներում:

2. ՀՀ առողջապահության նախարարության կողմից

Հոգեկան առողջության ոլորտի մասնագետների որակավորման բնութագրերը և կրթական ծարագրերն ու չափորոշիչները գտնվում են մշակման փուլում և գործընթացը կավարտվի 2016 թվականին:

Միջոցառման կատարումը գնահատվում է՝ սկսվել է ժամանակին:

Նպատակ 3, միջոցառում 1 - Մասնագիտական կրթական ծրագրերի, չափորոշիչների և ծրագրային մոդուլների վերանայում

Պատասխանատու՝ ՀՀ կրթության և գիտության նախարարություն

Համակատարող՝ ՀՀ առողջապահության նախարարություն, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, ԲՈՒՀ-եր (համաձայնությամբ)

Կատարման ժամկետը՝ 2015-2016 թվականներ

Նախատեսված արդյունքը՝ ըստ Միջոցառումների ցանկի – Արդյունքամետ չափորոշիչների առկայություն, մասնագիտական պրակտիկայի ծավալների մեծացում

Միջոցառման իրականացման մասին տրամադրված տեղեկատվություն

Տե՛ս Նպատակ 2, միջոցառում 3

Միջոցառման կատարումը գնահատվում է՝ սկսվել է ժամանակին:

Նպատակ 5, միջոցառում 1 - Հոգեկան խանգարումներով տառապող անձանց ընտանիքի անդամների և հարազատների իրազեկվածության բարձրացում և օգնություն առօրյա խնդիրների լուծման համար (ցերեկային կենտրոնների աշխատանքների շրջանակներում)

Պատասխանատու՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն

Համակատարող՝ ՀՀ առողջապահության նախարարություն, ՀՀ կրթության և գիտության նախարարություն

Կատարման ժամկետը՝ 2015-2016 թվականներ

Նախատեսված արդյունքը՝ ըստ Միջոցառումների ցանկի – Սոցիալ-հոգեբանական վերականգնման արդյունավետ պայմաններ մտերմների շրջապատում

Միջոցառման իրականացման մասին տրամադրված տեղեկատվություն

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության պատասխանատու աշխատողները պարբերաբար զանգվածային լրատվության միջոցներով լուսաբանել են հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց հիմնահարցերը, նրանց սոցիալական վիճակի և դրանց լուծման ուղղությամբ տարվող աշխատանքները, ինչպես նաև հեռուստատեսությամբ և լրատվության այլ աղբյուրներով քաղաքացիներին տեղեկացվել է խնամքի նոր հաստատության՝ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց «Ձորակ» խնամքի տան բացման մասին (1-ը հուլիսի, 2015 թ.): «Ձորակ» խնամքի տան առանձնահատկությունը կայանում է նրանում, որ այնտեղ շուրջօրյա խնամք են ստանում համեմատաբար պահպանված կարողություններով հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձինք, որոնց ընդունելիությունն այսուհետ կատարվելու է միայն նրանց կարիքների գնահատման հիման վրա համապատասխան մասնագետների կողմից տրված եզրակացության համաձայն:

Միջոցառման կատարումը գնահատվում է՝ սկսվել է ժամանակին:

Նպատակ 5, միջոցառում, 3 - Հոգեկան խանգարումներով տառապող անձանց ստիգմատիզացիայի, կարծրատիպերերի փոփոխման, ինչպես նաև հանրությանը իրազեկելու նպատակով նյութերի տպագրություն (տեղեկատվական թերթիկներ ծառայությունների վերաբերյալ, կատարված աշխատանքների վերաբերյալ գրքույկներ, պաստառներ)

Պատասխանատու՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, ՀՀ առողջապահության նախարարություն

Համակատարող՝ ՀՀ կրթության և գիտության նախարարություն, Համապատասխան հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ)

Կատարման ժամկետը՝ 2015-2016 թվականներ

Նախատեսված արդյունքը՝ ըստ Միջոցառումների ցանկի – Տեղեկատվության տարածում համայնքում, կարծրատիպերի և դիրքորոշումների փոփոխություն (ստիգմատիզացիայի նվազում)

Միջոցառման իրականացման մասին տրամադրված տեղեկատվություն

ՀՀ առողջապահության նախարարության կողմից

2015 թվականին իրականացվել են իրազեկման աշխատանքներ: Հոգեկան խանգարումներով տառապող անձանց ստիգմատիզացիայի, կարծրատիպերի փոփոխման նպատակով հունվարի 15-ին «Բլից ինֆո» մամուլի ակումբում կազմակերպվել է մամուլի ասուլիս Հոգեբույժների ասոցիացիայի նախագահ Արմեն Սողոյանի մասնակցությամբ: ՀՀ ԱՆ գլխավոր հոգեբույժ Սամվել Թորոսյանի մասնակցությամբ մարտի 6-ին կայացել է մամուլի ասուլիս «Մեդիա կենտրոնում»: Բանախոսը հանրությանը ներկայացրել է հոգեկան խանգարումներ ունեցող մարդկանց մեկուսացման խնդիրը: Մայիսի 29-ին «Իրավունք» թերթում ՀՀ ԱՆ գլխավոր հոգեբույժ Սամվել Թորոսյանի հետ հարցազրույց է տպագրվել հոգեկան առողջության հարցերի շուրջ: Հոկտեմբերի 10-ը Հոգեկան առողջության համաշխարհային ֆեդերացիան (ՀԱՀՖ) 1992 թվականից հռչակել է Հոգեկան առողջության համաշխարհային օր: Իրականացվել է մամուլի ասուլիս Հոգեբույժների ասոցիացիայի նախագահ Արմեն Սողոյանի մասնակցությամբ: Միաժամանակ, հոկտեմբերին ՀՀ առողջապահության նախարարության պատվերով Արմյուզ հեռուստաընկերությամբ հեռարձակվող «Ապրեցեք երկար» հաղորդաշարում կրկին անդրադարձ կլինի Հոգեկան առողջության համաշխարհային օրվան՝ նպատակ ունենալով մեկ անգամ ևս հասարակության, կազմակերպությունների և անհատների ուշադրությունը հրավիրել հոգեկան առողջության հիմնախնդիրների վրա:

Միջոցառման կատարումը գնահատվում է՝ չի սկսվել, քանի որ տեղեկատվական թերթիկներ, գրքույկներ, պաստառներ չեն տպագրվել:

Նպատակ 6, միջոցառում 1 - Մատուցվող ծառայությունների բարելավում և արդիականացում ա. Կլինիկական ուղեցույցների և հիվանդների վարման արձանագրությունները սահմանող Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի հրամանի ընդունում բ. Հիվանդանոցային հիգենիկ - հակահամաճարակային նորմատիվների արդիականացում և ներդրում

Պատասխանատու՝ ՀՀ առողջապահության նախարարություն

Համակատարող՝ Համապատասխան հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ)

Կատարման ժամկետը՝ 2015-2016 թվականներ

Արդյունքը՝ ըստ Միջոցառումների ցանկի – Բուժման ուղեցույցների հաստատում, հիգենիկ-հակահամաճարակային նորացված կանոնների սահմանում

Նախատեսված արդյունքը՝ ըստ տրամադրված տեղեկատվության

ՀՀ առողջապահության նախարարության կողմից

ՀՀ կառավարության 2015 թվականի փետրվարի 26-ի նիստի N 8 արձանագրային որոշմամբ հաստատվել է «Հայաստանի Հանրապետության հիվանդանոցային բուժօժանոցայությունների որակի ապահովման ռազմավարությունը»: Հիվանդանոցային բուժօժանոցայությունների որակի բարելավման սույն ռազմավարության իրագործման արդյունքում հնարավոր կլինի հասնել ապացուցողական բժշկության չափորոշիչներին (կլինիկական ուղեցույցներ, համառոտ գործելակարգեր, ալգորիթմեր) բուժաշխատողների գործունեության համապատասխանության բարձրացման, շարունակական մասնագիտական ուսուցման առումով բուժաշխատողների մոտիվացիայի խթանման, ներհիվանդանոցային վարակների առավել արդյունավետ կանխման, պացիենտների և բուժաշխատողների անվտանգության բարելավման, այն է՝ մասնագիտական վնասվածքների, անցանկալի դեպքերի և բժշկական սխալների նվազեցման, պացիենտների գոհունակության բարձրացման, առողջապահության ռեսուրսների առավել արդյունավետ օգտագործման և, վերջին հաշվով, բնակչության առողջական վիճակի բարելավման:

- 1) Մշակել և ոլորտային հասարակական կազմակերպությունների հետ քննարկման փուլում են գտնվում թվով 17 ուղեցույցներ:
- 2) Մշակման և քննարկման փուլում են գտնվում՝

Հիվանդանոցային բժշկական կազմակերպություններում հիվանդի ընդունման և վարման նպատակով գործելակարգը. հիվանդության պատմագրի լրացման գործելակարգը՝ այդ թվում հոգեբուժական, ինչպես նաև հիվանդանոցային հաստատությունների համար գործելակարգեր՝ այդ թվում հոգեբուժական, նարկոլոգիական:

Միջոցառման կատարումը գնահատվում է՝ սկսվել է ժամանակին:

Նպատակ 6, միջոցառում 4 - Շուրջօրյա խնամքի կարիք չունեցող հիվանդների համար ծառայությունների զարգացման (հոգեբույժի/հոգեթերապևտի/կլինիկական հոգեբանի կաբինետներ) կարողությունների նահատում և առաջարկությունների ներկայացում ՀՀ կառավարություն

Պատասխանատու՝ ՀՀ առողջապահության նախարարություն, ՀՀ մարզպետարաններ

Համակատարող՝ Համապատասխան հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ)

Կատարման ժամկետը՝ 2014-2019 թվականներ

Նախատեսված արդյունքը՝ ըստ Միջոցառումների ցանկի – Կուժեղացվի և բնակչությանն ավելի կմոտեցվի արտահիվանդանոցային հոգեբուժական ծառայությունը, ինչը հնարավորություն կտա խուսափել թանկարժեք և ոչ միշտ անհրաժեշտ ստացիոնար

ծառայություններից, ինչպես նաև հոգեկան առողջության խնդիրներ ունեցողների ինտեգրումը հասարակություն

Միջոցառման իրականացման մասին տրամադրված տեղեկատվություն

Տե՛ս Նպատակ 6, միջոցառում 6

Միջոցառման կատարումը գնահատվում է՝ սկսվել է ժամանակին:

Նպատակ 6, միջոցառում 5 – Հոգեբուժական դիսպանսերների ամբուլատոր ծառայությունների ապակենտրոնացման միջոցով Հայաստանի երեք քաղաքների (Երևան, Գյումրի, Վանաձոր) խոշոր պոլիկլինիկաներում կաբինետների ձևավորման նպատակով առաջարկությունների ներկայացում ՀՀ կառավարություն

Պատասխանատու՝ ՀՀ առողջապահության նախարարություն, ՀՀ մարզպետարաններ

Համակատարող՝ Համապատասխան հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ)

Կատարման ժամկետը՝ 2015-2016 թվականներ

Նախատեսված արդյունքը՝ ըստ Միջոցառումների ցանկի – Հոգեբուժական ծառայության մատչելիության ապահովմանն ուղղված առաջարկների ձևավորում

Միջոցառման իրականացման մասին տրամադրված տեղեկատվություն

1. Առողջապահության նախարարության կողմից

Տե՛ս Նպատակ 6, միջոցառում 6

2. ՀՀ Լոռու մարզպետարանի կողմից

Քննարկվել են հոգեբուժական ծառայության ռազմավարության մեջ առաջարկվելիք փոփոխությունները՝ Վանաձոր քաղաքի պոլիկլինիկաներում համապատասխան կաբինետների ձևավորման նպատակով, սակայն համապատասխան մասնագետ կադրերի պակասը թույլ չի տալիս իրականացնել այդ առաջարկությունները: Մասնագետ կադրերը ծանրաբեռնված ռեժիմով հոգեբուժական ծառայությունն իրականացնում են Լոռու մարզային հոգենյարդաբանական դիսպանսերում:

3. ՀՀ Շիրակի մարզպետարանի կողմից

Հոգեբուժական ծառայության մատչելիության ապահովմանն ուղղությամբ նախատեսվում է «Գյումրու միջազգային Կարմիր Խաչի անվան պոլիկլինիկա» և «Ն.Ա. Մելիքյանի անվան թիվ 2 պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերություններում ձևավորել հոգեբուժական կաբինետներ:

Միջոցառման կատարումը գնահատվում է՝ սկսվել է ժամանակին:

Նպատակ 6, միջոցառում 8 - Երեխաների և դեռահասների հոգեբուժական բաժանմունքների ձևավորման կարողությունների գնահատում և առաջարկությունների ներկայացում ՀՀ կառավարություն

Պատասխանատու՝ ՀՀ առողջապահության նախարարություն

Համակատարող՝ ՀՀ մարզպետարաններ, Համապատասխան հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ)

Կատարման ժամկետը՝ 2014-2016 թվականներ

Նախատեսված արդյունքը՝ ըստ Միջոցառումների ցանկի - Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող երեխաների և դեռահասների կյանքի որակի բարելավման համար անհրաժեշտ ծառայությունների ստեղծման առաջարկների կազմում

Միջոցառման իրականացման մասին տրամադրված տեղեկատվություն

1. ՀՀ Լոռու մարզպետարանի կողմից

Երեխաների և դեռահասների հոգեբուժական ծառայությունն ի գորու է իրականացնել «Լոռու մարզային հոգեկայրաբանական դիսպանսեր» ՓԲԸ-ն: Առաջարկություններ չեն ներկայացվել:

2. ՀՀ Շիրակի մարզպետարանի կողմից

Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող երեխաների և դեռահասների կյանքի որակի բարելավման համար անհրաժեշտ ծառայություն ստեղծելու նպատակով կազմակերպվել է մարզի հոգեբույժներից մեկի վերամասնագիտացում՝ ՀՀ ազգային ինստիտուտում 2014 թ. «Մանկական հոգեբուժություն» մասնագիտությամբ:

3. ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի կողմից

Մարզի 6 հանրակրթական դպրոցներում գործում են ներառական կրթություն, որտեղ հաճախում են 101 երեխաներ:

4. ՀՀ Կոտայքի մարզպետարանի կողմից

Երեխաների և դեռահասների հոգեբուժական բաժանմունքներ ստեղծելու հարցը նպատակահարմար չէ, քանի որ հոգեբուժական կաբինետներում հաշվառված հոգեկան առողջության խնդիր ունեցող 0-18 տարեկան 32 հիվանդից դեղորայքային բուժում են ստանում միայն 6-ը:

5. ՀՀ Արարատի մարզպետարանի կողմից

Երեխաների և դեռահասների համար մարզի Նոր Խարբերդի մասնագիտացված մանկատունը ապահովում է անհրաժեշտ սպասարկում:

6. ՀՀ Մյունիքի մարզպետարանի կողմից

ՀՀ Մյունիքի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության կողմից ըստ տարածաշրջանների, կարիքների գնահատման համար, ընտրվել են մասնագետներ, որոնց թեկնածությունը ներկայացվել է ՀՀ առողջապահության նախարարություն՝ համապատասխան դասընթացներ անցնելու համար: Հայտնվում է, որ 2015 թվականի օգոստոսին նշված մասնագետները անցել են համապատասխան դասընթացներ:

7. ՀՀ առողջապահության նախարարության կողմից (2015 թ. մարտի 30-ին տրամադրած տեղեկատվություն)

Երեխաների և դեռահասների հոգեբուժական ծառայության իրավիճակի գնահատման միջոցառումը կրկնում է ՀՀ առողջապահության նախարարի 01.04.2014թ. N657-Ս հրամանի պահանջները, որով ստեղծված աշխատանքային խումբը ձևավորվել էր ի կատարումն ՀՀ առողջապահության նախարարի գործակարգավարական խորհրդակցության հանձնարարականի, ուստի նպատակահարմար համարվեց աշխատանքային խմբի կազմը փոփոխության չենթարկել և նրանց կողմից ձևավորված առաջարկները՝ դիտարկելով վերոհիշյալ միջոցառման կատարման համատեքստում, լրամշակել և ներկայացնել ՀՀ կառավարության քննարկմանը, ինչը և կիրականացվի սահմանված ժամկետում (տե՛ս հավելված Դ.):

Միջոցառման կատարումը գնահատվում է՝ սկսվել է ժամանակին:

Նպատակ 6, միջոցառում 9 - Ակտիվ բուժում, այսինքն շարունակական բժշկական միջամտությունների, երկարատև կամ մշտապես խնամքի կարիք չունեցող հոգեկան առողջության խնդիրներ ունեցող մարդկանց համար ստեղծել համայնքային ծառայություններ և ինտեգրել նրանց հասարակության մեջ

Պատասխանատու՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, ՀՀ առողջապահության նախարարություն

Համակատարող՝ Տեղական ինքնակառավարման մարմիններ (համաձայնությամբ), Համապատասխան հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ)

Կատարման ժամկետը՝ 2014-2016 թվականներ

Արդյունքը՝ ըստ Միջոցառումների ցանկի – Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող մարդկանց կյանքի որակի բարելավում

Արդյունքը՝ ըստ տրամադրված տեղեկատվության

ՀՀ առողջապահության նախարարություն

(2015 թ. մարտի 30-ին տրամադրված տեղեկատվություն)

Հայաստանի Հանրապետությունում հոգեկան առողջության պահպանման և բարելավման 2014-2019 թվականների ռազմավարության կատարումն ապահովող միջոցառումների ցանկի 6-րդ կետի 9-րդ ենթակետի առաջին կատարող է սահմանված ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը, որի և Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստան կամակերպության միջև 2014 թվականի հուլիսի 16-ին ստորագրված Փոխըմբռնման հուշագրի շրջանակներում իրականացվող հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց խնամքի և սոցիալական սպասարկման ծառայություններ մատուցող հաստատություններում կարողությունների գնահատման աշխատանքներին մասնակցում են նաև ՀՀ առողջապահության նախարարության ներկայացուցիչները: Երկարատև կամ մշտապես խնամքի կարիք չունեցող հոգեկան առողջության խնդիրներ ունեցող մարդկանց համար համայնքային ծառայություններ ստեղծելու և նրանց հասարակության մեջ ինտեգրելու համար ուսումնասիրված միջազգային փորձի հիման վրա նախապատրաստվում է 2015 թվականին ՀՀ Լոռու մարզ Սպիտակ քաղաքի Իտալական թաղամասում տեղակայված Ժամանակավոր շինությունում, որը ներկայությամբ չի օգտագործվում, ստեղծել շուրջօրյա խնամքի տուն՝ 16 անձի համար: Շահառուների ընտրության հարցում առաջնահերթությունը տրվելու է մարզի բնակիչներին: «ԲԱց հասարակության հիմնադրամներ- ՀԱյաստան» կազմակերպությունը ծրագրի շրջանակներում պարտավորվում է 2015 թվականի ընթացքում վերանորոգել, կահավորել խնամքի տունը և ծրագիր ֆինանսավորել 2015 թվականի հուլիսից մինչև 2016 թվականի հուլիս ամիսը, իսկ ծրագրի շարունակությունն ապահովելու համար ներկայում քննարկման փուլում է համաֆինանսավորման հնարավորության հարցը:


Միջոցառման կատարումը գնահատվում է՝ սկսվել է ժամանակին:

Սյսպիտակ, շորրորդ խմբի 14 միջոցառումներից՝

- *իննի իրականացումը սկսվել է ժամանակին,*
- *երկուսի իրականացումը սկսվել է ուշացումով,*
- *երեքի իրականացումը չի սկսվել (տե՛ս Գծապատկեր 2):*

Գծապատկեր 2

Չորրորդ խմբի միջոցառումների իրականացման պատկերը



Ժամանակին սկսված ինը միջոցառման պատասխանատու են հետևյալ մարմինները՝

- *ՀՀ առողջապահության նախարարություն (2 միջոցառում),*
- *ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն (1 միջոցառում),*
- *ՀՀ կրթության և գիտության նախարարություն (2 միջոցառում),*
- *ՀՀ առողջապահության նախարարություն, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն (2 միջոցառում),*
- *ՀՀ առողջապահության նախարարություն, ՀՀ մարզպետարաններ (2 միջոցառում):*

Ուշացումով սկսված երկու միջոցառումների կատարման պատասխանատու է ՀՀ առողջապահության նախարարությունը:

Չսկսված միջոցառումների կատարման պատասխանատու են

- *ՀՀ առողջապահության նախարարություն (1 միջոցառում),*
- *ՀՀ արտաքին գործերի նախարարություն (1 միջոցառում),*
- *ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, ՀՀ առողջապահության նախարարություն (1 միջոցառում):*

Ամփոփում

Ուսումնասիրելով Ռազմավարության կատարումն ապահովող միջոցառումների իրականացումը 2014 թվականի ապրիլ - 2015 թվականի սեպտեմբեր ժամանակահատվածի համար՝ ըստ միջոցառումների կատարման ժամկետների, ծավալի, ինչպես նաև բովանդակության և ֆինանսավորման, եզրակացնում ենք՝

գնահատված 11 միջոցառումներից, որոնք պետք է իրականացվեն 2014, 2014-2015 և 2015 թթ.՝

- իրականացվել է 1-ը,
- մասամբ իրականացվել է 4-ը,
- չի իրականացվել 6-ը:

Եվս 14 միջոցառումներից, որոնց իրականացումը նախատեսված է 2014 կամ 2015 թվականներից՝

- ժամանակին սկսվել է ինը միջոցառման իրականացումը,
- սկսվել է ուշացումով 2 միջոցառման իրականացումը,
- չի սկսվել 3 միջոցառման իրականացումը:

Միջոցառումների կատարման պատասխանատու կամ համակատարող մարմինները միջոցառման իրականացման համար պահանջված և ծախսված ֆինանսական միջոցների վերաբերյալ տեղեկատվություն չեն տրամադրել:

Կազմակերպության տեղեկատվության հարցումներին ի պատասխան՝ տեղեկատվությունը տրամադրող մարմինը որպես կանոն տեղեկատվություն է տրամադրել միայն այն միջոցառումների վերաբերյալ, որոնց կատարման պատասխանատու է: Կարելի է ենթադրել, որ չկա հստակ մեխանիզմներ պատասխանատու և համակատարող մարմինների համագործակցությունն ապահովելու և բոլոր կատարողներին միջոցառման կատարմանը ներգրավելու համար:

Այսպիսով,

- միջոցառումները որպես կանոն չեն իրականացվում սահմանված ժամկետներում և ծավալով (*նպատակ 6, միջոցառում 6; 7, նպատակ 7, միջոցառում 1; 2, նպատակ 2, միջոցառում 2, նպատակ 5, միջոցառում 5, նպատակ 3, միջոցառում 2*),
- որոշ միջոցառումների իրականացման համար տարված աշխատանքները չեն բխում նախատեսված միջոցառումից և վերջինիս արդյունքից, կամ պարզ չի, թե տվյալ աշխատանքների միջոցով հնարավոր է արդյոք հասնել սահմանված արդյունքին (*նպատակ 6, միջոցառում 12; 2*),
- պարզ չէ միջոցառումների ֆինանսավորման աղբյուրները և ծավալը,
- հստակ չէ միջոցառումների կատարման պատասխանատուների և համակատարողների միջև համագործակցության մեխանիզմները կամ դրանք չեն կիրառվում:

Ռազմավարության իրականացումը 2014 թ. ապրիլ – 2015 թվականի սեպտեմբեր ամիսների համար կարող ենք գնահատել բավարար: Թեև նշված ժամանակահատվածում նախատեսված է 11 միջոցառում, սակայն դրանցից մեծ մասը չի իրականացվել կամ իրականացվել է ոչ լիարժեք:

Հավելվածներ

Հավելված Ա. ՀՀ առողջապահության նախարարի 24.11.2014 թ. «Պետության կողմից երաշխավորված անվճար հիվանդանոցային բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հոգեբուժական բժշկական կազմակերպություններում մշտադիտարկում կազմակերպելու մասին» թիվ 2746-Ա հրաման

ԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

«24» նոյեմբեր 2014թ.

No 2746 – Ա

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԱՆՎՃԱՐ ՀԻՎԱՆԴԱՆՈՑԱՅԻՆ
ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՊԱՍԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀՈԳԵԲՈՒԺԱԿԱՆ
ԲԺՇԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ
ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի օգոստոսի 15-ի N 1300-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կանոնադրության 12-րդ կետի դ) ենթակետը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի ապրիլի 17-ի նիստի N 15 արձանագրային որոշմամբ Հավելված 2-ով հաստատված Հայաստանի Հանրապետությունում հոգեկան առողջության պահպանման և բարելավման 2014-2019 թվականների ռազմավարության կատարումն ապահովող միջոցառումների ցանկի 6-րդ կետի 12-րդ ենթակետը

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ

1. Հոգեկան առողջության ծառայությունների որակի արդյունավետության ապահովման ոլորտում պետություն հանրային հատված համագործակցության շրջանակներում իրականացնել մշտադիտարկում:

Հաստատել՝

- 1) Հոգեբուժական կազմակերպությունների ցանկը՝ համաձայն Հավելված 1-ի,
- 2) Հոգեբուժական կազմակերպություններում մշտադիտարկումներ իրականացնողների ցանկը՝ համաձայն Հավելված 2-ի,



Հավելված 1
ՀՀ ԱՆ 2014թ. նոյեմբեր 24
N 2746-Ա հրամանի

ՑԱՆԿ

ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՀՈԳԵՐՈՒԹՎԱԿԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

1. «Ավան» հոգեկան առողջության կենտրոն» ՓԲԸ
2. «Նորք» հոգեբուժական կենտրոն» ՓԲԸ
3. «Նուբարաշեն» հոգեբուժական կենտրոն» ՓԲԸ
4. «Նևրոզների կլինիկա» ՓԲԸ
5. «Արմաշի առողջության կենտրոն» ՓԲԸ
6. «Սևանի հոգեբուժական հիվանդանոց» ՓԲԸ
7. «Վանաձորի նյարդահոգեբուժական դինսպանսեր» ՓԲԸ
8. «Կապանի նյարդահոգեբուժական դինսպանսեր» ՓԲԸ
9. «Գյումրու հոգեկան առողջության կենտրոն» ՓԲԸ



ՑԱՆԿ

ՀՈԳԵՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ
ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂՆԵՐԻ

1. Արտյոմ Թադևոսյան ՀՀ ԱՆ աշխատակազմի բժշկական օգնության քաղաքականության վարչության, հիվանդանոցային քաղաքականության բաժնի պետ,
2. Թամարա Ղուկասյան ՀՀ ԱՆ աշխատակազմի բժշկական օգնության քաղաքականության վարչության հիվանդանոցային քաղաքականության բաժնի գլխավոր մասնագետ,
3. Նունե Փաշայան ՀՀ ԱՆ աշխատակազմի մոր և մանկան առողջության պահպանման վարչության երեխաների առողջության պաշտպանման բաժնի պետ,
4. Տաթևիկ Ղուկասյան ՀՀ ԱՆ աշխատակազմի իրավաբանական վարչության իրավական ապահովման բաժնի պետ,
6. Քրիստինա Գյուրջյան ՀՀ ԱՆ աշխատակազմի հանրային առողջության բաժնի գլխավոր մասնագետ,
7. Արմեն Սողոյան «Հոգեբույժների ասոցիացիա» ՀԿ նախագահ (համաձայնությամբ)
8. Կարինե Թաթարյան «Սոցիալական հոգեբուժություն» Հայկական ասոցիացիայի վարչության անդամ (համաձայնությամբ),
9. Լիլիթ Բաղդասարյան «Ամբրա» հոգեկան քարեկեցության կենտրոն» ՀԿ նախագահ (համաձայնությամբ):

ՀՈԳԵՐՈՒԺԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՄՇՏԱԴԻՏԱՐԿԱՆ
 ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՁԵՎԸ

Բժշկական կազմակերպության անվանումը

Օրը, ամիսը, տարին _____

Մշտադիտարկման իրականացման ընթացքում գնահատման ենթակա հարցեր			Նշումներ
1. Ընդունարան ինքնակամ եկած հիվանդների վերաբերյալ	Հիվանդների թիվը՝	Դրանցից հոսպիտալացվել են՝	
2. Ընդունարան շտապ օգնության մեքենայով բերված հիվանդների վերաբերյալ	Հիվանդների թիվը՝	Դրանցից հոսպիտալացվել են՝	
3. Ներկա ժամանակահատվածում առկա հիվանդների քանակը և համապատասխանությունը օրվա գրանցված շարժին	Քանակը -----	Համապատասխանում է՝ այո----- Ոչ-----	
4. Իվանդանոցային պայմաններում հիվանդների ամբուլատոր ընդունելության վերաբերյալ	Ամբուլատոր ընդունելության վերաբերյալ կարգ առկա է՝ թե ոչ.		
5. Հիվանդի հարազատների (ներկայացուցիչների) կողմից դժգոհությունները ընդունարանում հիվանդների ընդունման և վարման հետ կապված	Դժգոհությունների թիվը՝	Դժգոհության պատճառը (նշել)	
6. Հարկադիր բուժման մեջ գտնվող հիվանդների թիվը			

Հավելված Բ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 16.12.2014 թ. «Պետության կողմից երաշխավորված անվճար հիվանդանոցային բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հոգեբուժական բժշկական կազմակերպություններում ուսումնասիրություններ կազմակերպելու մասին» թիվ 2973-Ա հրաման

ԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

«16» դեկտեմբեր 2014թ.

No 2973 – Ա

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԱՆՎՃԱՐ ՀԻՎԱՆԴԱՆՈՑԱՅԻՆ
ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀՈԳԵԲՈՒԺԱԿԱՆ
ԲԺՇԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի օգոստոսի 15-ի N 1300-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կանոնադրության 12-րդ կետի դ) ենթակետը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի ապրիլի 17-ի նիստի N 15 արձանագրային որոշման Հավելված 2-ով հաստատված Հայաստանի Հանրապետությունում հոգեկան առողջության պահպանման և բարելավման 2014-2019 թվականների ռազմավարության կատարումն ապահովող միջոցառումների ցանկի 6-րդ կետի 4-րդ, 6-րդ, 7-րդ ենթակետերը, շուրջօրյա խնամքի կարիք չունեցող հիվանդների համար ծառայությունների զարգացման, Հայաստանի Հանրապետության մարզերում ստացիոնար և ամբուլատոր ծառայություն իրականացնող հոգեկան առողջության կենտրոնների ստեղծման, ծերունական հոգեբուժական հաստատությունների, ստորաբաժանումների ստեղծման հնարավորությունների կարողությունների գնահատման նպատակով

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ

- 1.Ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով
- 1) Ծաղիկ Վարդանյան-ՀՀ ԱՆ աշխատակազմի բժշկական օգնության քաղաքականության վարչության պետ /Նախագահ/,

Հավելված Գ. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի
2014 թվականի ապրիլի 16-ի թիվ 811-Ս հրաման

ՀՐԱՄԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Ք. Երևան
N 811 - Ա «16» ապրիլ 2014թ

2014 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԱՆՎՃԱՐ
ՀՈԳԵԲՈՒԺԱԿԱՆ ԵՎ ՆԱՐԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ
ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԵՎ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ
ՆՈՐՄԱՏԻՎՆԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 1515-Ն որոշման հավելված 2-ի 30-րդ կետի 1) ենթակետի, ա) պարբերությունը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի օգոստոսի 15-ի 1300-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կանոնադրության 12-րդ կետի «դ» ենթակետը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հաստատել՝
 - 1) Պետության կողմից երաշխավորված անվճար հոգեբուժական և նարկոլոգիական հիվանդանոցային և արտահիվանդանոցային բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող բժշկական կազմակերպությունների պայմանագրային զումարների հաշվարկման և ֆինանսավորման նորմատիվները՝ համաձայն հավելված 1-ի:
2. Սույն հրամանը տարածվում է 2014 թվականի ապրիլի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:
3. Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի աշխատակազմի ղեկավար Սուրեն Քրմոյանին:

ՆԱԽԱՐԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝



ԴԵՐԵՆԻԿ ԴՈՒՄԱՆՅԱՆ

Հավելված Դ. ՀՀ առողջապահության նախարարի 01.04.2014թ. «Մանկական հոգեբուժական ծառայության բարելավման ծրագրի մշակման աշխատանքային խումբ ստեղծելու մասին» N657-Ա հրաման

ՀՐԱՄԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱԿԱԿՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

ք. Երևան «01» ապրիլ 2014թ.
N 657 - Ա

ՄԱՆԿԱԿԱՆ ՀՈԳԵԲՈՒԺԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԾՐԱԳՐԻ
ՄՇԱԿՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի օգոստոսի 15-ի N1300-Ն որոշման Հավելված 1-ով հաստատված Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կանոնադրության 12-րդ կետի «դ» ենթակետը, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի գործակարգավարական խորհրդակցության թիվ 9 արձանագրության 2-րդ կետը, ինչպես նաև մանկական հոգեբուժական ծառայության բարելավման նպատակով,

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ

1. Ստեղծել մանկական հոգեբուժական ծառայության իրավիճակի գնահատման և բարելավման առաջարկությունների մշակման աշխատանքային խումբ՝ համաձայն հավելվածի:
2. Աշխատանքային խմբի ղեկավարին՝
 - 1) մեկամսյա ժամկետում մշակել և քննարկման ներկայացնել մանկական հոգեբուժական ծառայության բարելավման ծրագրի նախագիծ,
 - 2) անհրաժեշտության դեպքում աշխատանքներին ներգրավել այլ մասնագետների:
3. Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել ՀՀ առողջապահության նախարարի տեղակալ Ս.Խաչատրյանին:



ԴԵՐԵՆԻԿ ԴՈՒՄԱՆՅԱՆ